



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material








891.99

F-45

28974.

Гյուրամբ, Ա.

ապի Ողբեկ: 15m.



ՍՎԲԱՏ ԲԻՒԲԱՏ

(ՅԵՐ ՂԱԶԱՐՈՒՅՑ)

109

Ահաբատի Արծիկը



Վ. Ա. Պ. Ա. Ա. Ա. Ա. Ա.

Ա. Ա. Ա. Ա. Ա.

(5 մար և 4 սմակի)

Բ. ՏՊԱՐԱԽԻՔԻ

ՏՊԱՐԱԽԻՔ

Ա. ՏՕՒՐԿԵԱՆ

ԴԵԿՈՒՅ

1933

89/99

F - 75

ՏԵՂԱԳՈՐԾՎԱԿԱՆ Հ 1961 թ.

# ԱԻԱՐԱՅՐԻ ԱՐԵՒԻԿԸ

ԿԱՐ

# ՎԱՐԴԱԿԱՆՆԵՐ

(Յրապետած 1912 ին)



Հ 554 Ք 2524  
Հ 555 Ք 2524  
Հ 556 Ք 2524  
Հ 557 Ք 2524  
Հ 558 Ք 2524

A 5248

891.39  
Բ-75

ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ  
(ՏԵՐ ԴԱԶԱՐԵՆՑ)

ԱԿԱՐԱՅԻ ԱՐԺԻԿ




ՎԱՐԴԱՎԱՐ

ՈՂԲԵՐԳ.

(5 արար եւ 4 պատկեր)

Բ. ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ



# ՏՊԱՐԱՆ

## Կ. ՏՕՆԻԿԵԱՆ

Կ'ատանձնէ ամէն տեսակ տպագրական զործեր,  
դրքի, թերթի, և առեւտրական թուղթերու, հարսա-  
նեկան հրաւիրագրերու, դպրոց սկան տետրակներու  
և այլն, և այլն :

Կը պատրաստուին քառչուէ կնիքներ :

Կը կաղմուին դպրոցական տետրակներ և դրքեր :

Կը վաճառուին ամէն տեսակ թերթեր, դրքեր,  
կը կատարուին փոխանակութիւններ Դրավաճառ և  
հրատարակիչներու հետ :

Դիմել՝

Տպարան Գրատուն

Կ. ՏՕՆԻԿԵԱՆ

Rue Nahr—St. Michél

Beyrouth

Առաջին անգամ սպազրուած 1909 ին կ. Պոլիս  
Տուողը — Հրատարակիչք Զարեհ Ն. Պէրալէրեան եւ  
վագինակ Բիւրատ. թիրաժ 3000 օրինակ:

Առաջին անգամ ներկայացուած Գահիրէի Խոխ-  
իական թատրոնին մէջ 1900ի Ս. Վարդանանց գիշերը  
Ֆառուկաճեան — Պէնուկան միացեալ թատերախում-  
բին կռկմէ:



## ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ

ՆԱՀԱՏԱԿ ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻՆ

Խնած է 1882 Մարտ 14ին Զեյթուն, ճահատակուած  
Սյու (Անգլարա - Դամլը Տէրէ) 1915 Օզոսոս:



Բիւրատի այս գործը իբրեւ ԼիՊՐԵԹԹՈՅ  
լոյս տեսած է. առձակ գրութիւն մըն է. ազ-  
գասիրութիւն կ'արծարծէ հանդիսականներուն. ա-  
նեկէ կարելի չէ սպասել բանասեղծական  
կամ գրական նորութիւն, սակայն պէտք է  
ըսիլ որ Պոլսոյ մէջ ես տեսած եմ որ Սահմանա-  
դրութեան օրերուն՝ Հայ ժողովուրդը աննկա-  
րագրելի խանդով քատրոնին մէջ խուժած, հան-  
դիսատես կ'ըլլար «Աւարայրի Արծիւ»ի ներկա-  
յացումին: Բիւրատի դիտումը շատ իրաւացի էր.  
Պոլսոյ ժողովուրդը գաւառացիին պէս ազգա-  
սիրական խանդավառութիւն չունէր, նման եր-  
կերով հարկ էր ցնցել անոր անտարերութիւնը:  
Սահմանադրութիւնը ազատութիւն կուտար ազատ  
ազգասէրներ ըլլալու:

Հ. Ա. ԵՐԵՄԵԱՆ

## ԱՆՁԻՆՔ

---

Վարդան Մամիկոնեան	Սպարապես
Յազկերս	Արքայ պարսից
Վասակ	Մինեաց իշխան
Տիկին Զարուհի	Մամիկոնեան
Օրիորդ Շուշանիկ	»
Վրոյր	» ի խօսեցեալը
Յովսէփի կարողիկոս	
Սահակ Եպիսկոպոս	
Ղետնդ Երէց	
Զանգակ Երէց	Մատնիչ
Դեմակես	
Մոզպես	
Միհրներսեհ	Հազարապետ պարսից
Ներշապուհ Արծրունի	
Առանձար Ամատունի	
Վահրամ	Զինակիր Վարդանայ
Եպիսկոպոսներ, զօրքեր, քուրմեր.	

# ԱԿԱՐԱՅՐԻ ԱՐԾԻՒԾ

## ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Վարդան. (մինակ իր ապարանիք սրահը). — Այս՝ կոռիել կամ ուրանա՛լ, ա՛յս է Յաղիկրտի կամքը. Միշը բներսեն պատառխա՞ն կ'ուզէ, Դենչապուն մարզագանը բնաջինչ ընել կը սպառնայ բոլոր հայութիւնը, եթէ մերժենք հրովարտակը. իսկ եթէ չը մերժենք զայն, պէտք է ուրեմն մերժենք մեր նաուուա՛ծը, մեր եկեղեցին, մեր Ա՛զգը. պէտք է թաղենք մեր անկախութիւնը, եթէ ո՛չ, պէտք է ընդունինք Առւրբ պատերազմը... (մեծ քայլերով սրանը կը չափի): Աւ միթէ կա՞յ ուրիշ ելք մը: Յաղիկրտ արիւնի ու մոխիրի թագաւորն Աւեւելքի բռն սկալը Արեւմուտքի Սարսափր. ա՛նձ ու զանձ սպառեց արգէն, բայց զեռ պարտութիւն չի՛ խոստովանիր, ան՝ մէ՛կ երազ ունի ազգիրը տաղավարել Որմիզդի շուքին տակ, «Մի հօտ և մի հոգիւ»: Զառանցա՞նք... (քերիջներով): Ա՛րքան ալ զիւրին բան, բայց Վարդանի երակներուն մէջ զեռ կը հոսի՛ արիւնի կաթիլ մը՝ Ս. Եկեղեցին, կաթիլ մը Ս. Վրէժի, վերջին կաթիլ մըն ալ Ս. Աղառութեան համար...: Սթափէ՛, Յաղկե՛րտ, սթափէ՛ ցնորքէղ, Վարդան զեռ ո՛զջ է. (բորբոքած) Վահրամ...

(Վահրամ ներս կը մտնի)

### ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՎԱՐԴԱՆ, ՎՈՀՐԱՄ

Վահրամ. — Տէ՛ր Սպառապետ :

Վարդան. — Պատրաստ է ամէն բան :

Վահրամ. — Կազմու պատրաստ, ձեր հրամանին համեմատ : (Վահրամ դուքս կ'ելլէ, ներս կը մտնե Տիկին Զարուհի) :

### ՏԵՍԱՐԱՆ Գ.

Զարուհի. — Ի՞նչ պատրաստութիւն դարձեալ,

Վարդան. — Ի՞նչ կայ որ...

Զարուհի. — Ի՞ն պիտի ըլլայ. արեւմուտքէն արեւելք, հարաւէն հիւսիս արշաւեցիր ու դեռ կ'արշաւես. ասի՞նչ է. Կովկասի կիրճերէ՞ն ալ չը ձանձրացար. ալ հերիք է. քիչ մըն ալ տունդ կեցի՛ր :

Վարդան. — Ի՞նչ կը խօսիս, Զարուհի՛. ի՞նչ, թողում որ սլարսիկը պղծէ՞ մեր տաճարները. մոխի՞ր դառնան գիւղօրէներն ու քաղաքները. արեւապաշտ քուրմէ՞րը զան թափին Հայաստան, մեր խորաններէն Որմի՞զզը քարոզեն ու մեր Փրկի՞չը նախատեն. ո՞ր գեղգ մնաց կոյս. մնա՞ց քաղաք մը, ուր մուտ զտած չրլլան այդ զարշելի առաքեալնե՛րը... Ա՛ն, Զարուհի, սոսկալի՛ վիճակ է :

Զարուհի. — Միայն քո՞ւ աչքիդ առջեւ կ'ըլլան այդ ամէնը...

Վարդան. — (Որտեղած) — Դուն չի՞ պիտի հասկեաս իմ կոչումս. երբ կրօնքն ու հայրենիքը կը խօսին,

ամէն քան կը լոէ . ի՞նչ , կ'ու զէիր լուս ականաաես .  
նե՞ր ըլլայինք այդ բոլորին :

Զարուիի . — Քեզի՞ միայն . քեզի՞ միաց , Տէ՛ր Սպա-  
րագետ , պաշտպանել այս ապերախտ աղջը . չը նա-  
յի՞ս , ի՞նչ կ'ընէ վասակ Սիւնեաց իշխանը , նախա-  
րարներուն զլուխը . հայոց մարզպա՞նը . ան ինչո՞ւ  
չի շարժիր . զո՞ւն միայն եզար Հայաստանի բաղդին  
վարիչը . (աչքերը արցունեու ընտանի՞քդ , մէկ հատիկ  
Շուշանի՞կդ յիշէ՛ . . .

Վարդան . — Մի՛ , մի՛ առներ բերանդ այդ բառերը ,  
զիտե՞ս ո՞վ ես գուն . Տիկին Մամիկոնեա՞նը մա՛յրը մեծ  
աղջին , որուն բազդը սեւցեր , արեւը մաք'լու մօ՞տ է ,  
մեր անկախաւ թեան վերջալոյսը կը թաղուի զերու-  
թեան զիշերուան մէջ ու գուն ընտանեկան յարիի ,  
սիրոյ և երջանկու թեան արշալոյսնե՞րը կ'երգեա . . .

Զարունի . — Բայց ինչո՞ւ ամուսնացար :

Վարդան . — Զգո՞յշ , Զարունի՛ , մոոցա՞ռ տոհմդ :

Զարունի . — Միրտս փղձկա՞ծ է . ի՞նչ խօսելո չեմ զի-  
տեր , Սպարապե՞տ , ե՛ս ալ զիտեմ թէ՝ ի՞նչ ճգնաժա-  
մէ կ'անցնի աղջս , ե՛ս ալ կը պաշտեմ հայրենի՞քը  
հոգէ՞ս կը նու իրեմ Հայաստանի արեւուն . բայց երբ  
որ շուրջս կը գալ սրուին սովուններ , դաւաճաններու-  
սերո՞ւնդ մը . կը սատի՞ այն ատեն սիրոս , կը կար-  
մըրիմ անունէս : Պարսիկին ի՞նչ է յանցանքը , երբ  
մերինչերը , կղեր թէ աշխարհական , եղած են Յազ-  
կերտի խորհրդատուները :

Վարդան . — Մաքրե՛լ պիտի տամ մեր մէջէն , բոլոր  
պիզճերը , զիմակնե՞րը պիտի պատոեմ կեզծ հայրե-  
նասէրներուն . աշխարհի երեսին պիտի պոռամ թէ՝

Հայ աղղը՝ մատիրոս ա'զգն է, աղղերուն է'ն աղնիւը՝  
ա'լ բաւակա'ն է, դուն քաշուէ' սենեակդ, ապրէ'  
խաղաղաւէտ կեանքդ. ևս ամէն բան խորհած եմ ու  
վճռած :

(նոյն միջոցին Վահրամ ներս կը մտնի տապով)

Վահրամ. — Տէ՛ր Սպարապետ. Ա. Հայրապետին կող-  
մէն բամբեր մը կ'ս գասէ դուրսը, այս գրութիւնը  
յանձնեց,

Վարդան. — (Նամակին վրայ նայելով, Վահրամին),  
ըսէ՛ բանբերին թող չըսպասէ :

Վահրամ. — Արդէն վար չէ՛ իջեր ձիէն. ա'յնքան կ'ա-  
ճապարէ :

Վարդան. — Զարուհի՛, զիս քիչ մը մինակ թողէ՛ք-  
տեսնե՛նք ի'նչ պիտի ընենք:

Հարուիի. — (մոմուալով գուրս կ'ելլի) Նո՞ր պիտի խոր-  
հիս ի'նչ ընելիքդ. արդէն ըղեղիդ մէջ դրած ես կըռ-  
ուիլ:

Վարդան. — (Բարձրաձայն կարդալով նամակը).

«Առ արի Սպարապետն Հայաց Մեծաց Վարդա-  
նի Տանէն Մամիկոնենց, ողջոյն և Օրհնութիւն ի  
«Տեառնէ մերմէ ի Փրկչէն Յիսուսի Քրիստոսէ :

«Յայտ լիցի Սիրելութեանդ մերում, զի այսօր  
«յետ միջաւուր եղիցի ժողովս համագումար ի քաղա-  
«քի աստ յԱրտաշատ, յոր հրաւիրեալք են ի նախա-  
«րարաց որոց յայտնի են անուանք յաշխարհիս Հա-  
«յոց, առ ի զրել և յղել զպատշաճ պատասխանիս հրո-  
«վարտ սկին Յաղկերտի արքայից արքային Պարսից :

«Հաճեսցի ուրեմն և Սիրելիութիւն քո ժամա-  
«նել այսօր ի սերկանս՝ Ժողովոյս այսմիկ գնչ մաս-

«Հակից և փութալի խորհրդակցութիւն»  
«Աղջունիւ Սիրոյ և Օքնութեան» :

Աղօթաբար  
ՅՈՎՈՒԹԻՄ ԿԱՐՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ

Ի Փրկչական ամին 450

Ի 14ն Հոկտեմբերի


Արտաշատ

— Վահրամ, ձիս հանէ'.

Վահրամ. — (Վահրամ դուրս կ'ելլէ եւ անմիջապես ետ կը վերադառնայ). Տէ՛ր Սպարապե՛տ, Դեւոնդ երէցը կու գայ:

Վարդան. — (Կասկածոς) — Այս ատեն ի՞նչ զործ ունի-  
կաթողիկոսը թողեր, եկեր է զիս տեսնելու. ո՛վ զի-  
տէ ինչե՛ր ունի խօսելիք. (Գլուխը կ'երեցնէ ու սրա-  
նին մեջ ման կուզայ), Վահրամ, գնա՛, զնա՛ դիմա-  
ւորէ՛, (Վահրամ դուրս կ'ելլէ) մերինները չը տեսնեն,  
տեսակցութիւնը գաղտնի՛ պէտք է ըլլայ. մինակ,  
բոլորովի՛ն մինակ ըլլանք. (Դեպի դուռը կ'ուղղէ  
քայլերը, Տեր Դեւոնդ ներս կը մտնէ).

### ՏԵՍԱՐԱՆ Դ.



ՎԱՐԴԱՆ, ԴԵՒՈՆԴ ԵՐԷՑ

Դեւոնդ. — Ողջո՛յն ընդ քեզ, քա՛ջդ Սպարապետ.

Վարդան. — Օքնեա՛ Տէր, հովի՛ւ քաջ,

Դեւոնդ. (արտօնանով) — Ատեն չկայ, պէտք է հիմա՛յ  
ետ գառնամ. զիտե՞ս ինչո՞ւ եկած եմ. Ա. Հայրապետը  
զիս զրկեց որ գաղտփարդ առնենք կանխաւ որ ըստ

այնմ շարժինք համագումարին մէջ :

Վարդան. — Գաղափարս նո՞յնն է :

Դեւոնդ. — Այսի՞նքն :

Վարդան. — Հրովարտա՛կը պոտոել, սուտերա՛զմ  
հըրատարակել :

Դեւոնդ. — Բայց պատրաստ էք. բերդերն ու պարիսպները պաշտպանուելու դիրքին մէ՞ջ են, նախարարաներուն տրամադրութիւնները չօշափա՞ծ էք :

Վարդան. — Ամէն բան պատրաստ կ'ըլլայ, վտանգը վտանգ ըլլալէ կը դադրի, երբ զոյի կամ չը զոյի խնդիրը կը ծագի. ի՞նչ կը կարծէք, երէ՛ց, ժողովուրդը մեռա՞ծ կը կարծէք :

Դեւոնդ. — Օրհնեա՛լ ըլլայ ժողովուրդս, Տէ՛՛ Սովարապետ. կենդանին է և հլու, գառնուկներու հատ մը. այդ կողմէն վախ չունիմ. վախս, միակ կառկածս՝ նախարարներուն կողմէն է. վառամոյնե՛ր կան, որոնք՝ ա՛զգն ալ, կրանքն ալ պիտի ուրանան, վատե՛ր : Անիրա՛ւ. Սիւնին կը տեսնե՞ս, կը վախնամ որ չըլլա՛յ թէ այսօրուան Համագումարը խանգարէ. միտքերը պղտորէ. այն տաեն ի՞նչ ընել պէտքէ :

Վարդան. — Այն ատե՞ն, ամէն ճիգ կը թափենք զանոնք կարգի բերելու. եթէ խրատով ու յորդորներով չը յաջողինք, կը զատենք զանոնք փարախէն, դայլե՛ր, լրտեսնե՛րը... ամէն զզուշութիւն կը բանեցնենք գաղտնիք մը զուրս չը հանելով, ձեռքի տակէ կը կազմենք մաքառող ո՛յժ մը, աղզը բուռը մէ՛կ բանակ :

Դեւոնդ. — Ատոր տարակոյս չկայ, բայց Վասա՞կը, ա՛յս, եթէ կարգս ներեր, եթէ սա սքեմը չըլլար,

անոր արիւնը ե՞ս կը խմէի... .

Վարդան. — Այդքան սոսկում ազգած է քեղի երէ՛ց, Դեւոնդ. — Ե՞ս, վախնամ Սիւնիէն.

Վարդան. — Իրա՛ւ, սզգեցի՛կ է Վասակ, վարպետորդի՛ է, բայց չմոռնանք նաև որ վախկուտ ալ է, որովհետեւ բռնաւորի խմոր ունի. բռնաւորները յաճախ վախերնուն է որ անգթութիւն կը գործե՛ն, ան՝ վերջը վերջը տեղի պիտի տայ. Տէ՛ր հայր, դուն հանդա՛րտ կեցիր:

Դեւոնդ. (արցունիւս աչերով) — Ես գիտեմ որ Մամիկոնեան Տոհմը՝ երկրորդ նախախնամութի՛ւնն է Հայուստանին. գիտե՛մ, որ Վարդան հոլաթեւ արծիւմը, ուսւառնած կեցած է հայրենեաց վերեւ ու պիտի չթողում որ օտարներ յափշտակեն մեր ինչքերը. Տէ՛ր Յիսուս իր բարերար աջով պահէ պահպահէ այս օրհներեալ Տունը, Ազգին Ապաստանարանը:

Վարդան. — Տէ՛ր Հայր, այդ խօսքերը չե՛ն ախորժնչեր ականջներուս, որոնք կը սիրեն յաճախ դուրնջել շեփորներու շոխնդներէն ու սուրերու շկահէն. ծարաւի՛ եմ ծարաւի՛, կ'ուզեմ ժամ'մ առաջ կոռւիլ մե՛ծ կոփւը, վճռակա՞նը, ջախջախել յամառ Յազկերտի զլու՛խը, որուն ըզեղը՝ կարծես թէ՛ լեցուայ ըլլար ատրուշաններու մոխրովը:

Դեւոնդ. — Դժոխքի կրա՛կը տանի, կրակներու մէ՛ջ տապլտկի այդ կրակին երկրպ օդուն, այդ պատուհանը Քրիստոնէութեան:

Վարդան. — Տէ՛ր հայր, ժամանակը սո՞ւղ է, երթանք, երթանք Արիւնին ու Յաղթանակին ճամբան, այո՛, կոռւի՛լ պէտք է, յաղթե՛լ կամ մեռնիլ:

ՏԵՍԱՐԱՆ Ե.

( Նուշանիկ. մեսաբսկ ծաղկանկար դրօւակ մը ձեռքը, յանկարծ ներս կը մտնէ). — Այս՝, հայր սպարապետ, յաղթե՛լ կամ, այսպէ՛ս ուխտեց Շուշանիկ :

Վարդան. (Յանկարծակիկ եկած, ժամանելով) — Ա՞ս ո՞ւր էր ո՞ր՝

Դեւոնդ. (հիացումով) — Ապրի՛ս, աղջի՛կս, կ'օրհնեմ ուխտդ, եռա՛նդդ սիրեմ, ո՛վ հօրդ արժանաւոր պայազատիկ, կեցցե՛ս միշտ, Մամիկոնեան Զարմին անուշանոտ ու զունագեղ ծաղի՛լը . . . :

Նուշանիկ. (ներոսուհիի մը դիրքով) — Անուշանոտ կամ զունագեղ, արժանի չե՛մ կոչուելու, մինչե՛ւ որ իմ սեռիս պատի՛ւը չփրկեմ. մինչեւ որ՝ Ակուած քոյրերուս, հայրենիքիս անրիծ կոյսերուն վրէ՛մը չլուծեմ. ե՛ս ալ պէտք է վազեմ զա՛շտը պատերազմի, խառնուի՛մ քաջերու երամին, քաջաբա՛ր կոռուիմ ու, եթէ պէ՛տք ըլլայ, մեռնի՛մ. հայրենեաց համար զոհւողին երանի՛. . . անմահութի՛ւն է ան, ո՛չ թէ մահ, Վարդան (կոտրուած լեմբեվ մը, մեղմաձայն) — Երանի՛թէ այդ քու զզացումներուդ կէսին կէսը, քառորդին քառորդը ունենար . . . մայրդ. բայց հոգի՛ս, զուն քիչ մը համբերէ՛, հոս կեցի՛ր, ատե նը կայ, այս անզամ ես մինակ երթամ, լուծե՛մ վրէմը բիւրաւորներուն. իսկ զուն, հո՞ս կեցիր, մօրդ քով, զի՞նքը մխիթարէ՛, սրտապնդէ՛. ան շա՛տ կարօտ է քեզի պէս խորհրդականի մը. (դառնալով Տէր Դեւոնդին) այնպէս չէ՞ Տէր հայր :

Դեւոնդ. — Շուշանիկին) — Այս', այս', հո'ս կեցի՛ր,  
աղջիկս, Աստուծով, Հայոց սպար սպետ հայրդ՝ յաղ.  
թութեան գագինիներով պիտի դառնայ եւ վարձատրէ  
քեզ (ժամանակ) ուրիշ կերպով, դուն աղօթք ըրէ՛ որ  
շուտով վերջանայ մեծ կոխը, որ գեռ չէ՛ սկսած:  
Սանդուխտ ու Հռիփսիմէ կոյսերը քեզի բարեխօս  
ըլլան, Կարմիր Վարդանին հարազա՛տ աղջիկ:  
Շուշանիկ. — Մի՛ վախնար, հա՛յր, մի վախնար եր-  
րէք ինծի համար. ես կը սիրեմ արիւնր. թչնամիին  
արիւնը... Ես ալ զին որ եմ հայրենիքիս, ուխտեալ  
զինւորուհի մը, քեզի՛ պիտի հետեւիմ. շուքիդ պէս,  
պիտի քովէդ չզատուիմ, վահանիդ քով վահա՛ն պիտի  
բռնեմ, պիտի չհեռանամ քովէդ ու հետդ պէտի...  
մեռիմ: (Տեսարանին մեկ անկիւնը կը բառուի, դրօւ-  
կին կրթնած, ՏՏՏՆԵ ու խոկաւն):

Դեւոնդ. — Հանդարտէ՛, արջի՛կս, հանդարտէ՛, ամէն  
բան կարգի կը մտնէ, միայն զուն քիչ մը համբերէ՛,  
զնա՛. մի յուղուիր, ու մեզ մինակ ձգէ՛ հոս. (Շու-  
շանիկ շիկնոս, կը մօտենայ, կ'առնէ ազը Տ. Դեւոնդին  
ես հօրը վիզը պլուելով, դրօւակը ձեռէր կը հեռանայ,  
դուրս կ'ելլէ):

Վարդան. — Ե՞ս ուրեմն, Վարդա՛ն, արտաքին կնծիո-  
ները չէ՛ին բաւեր, ու հիմա, ներքին, ահաւո՛ր ար-  
դելք մը կուգայ կեցնել ընթացքդ, Վարդա՛ն... Ես  
հիմա երկու սուրի միջնեւ կը տատանիմ, Զարուհիին  
յայտնութիւնները բաւական լուրջ են, մտմտալ կու-  
տան ամէն ընտանիքի հօր. իրա՛ւ է, երէ՛ց նշանուած  
աղջիկս տունը մինակ ձգել չըլլար. ի՞նչ ընեմ. հետ  
տանիմ. խեղճը պիտի չկրնայ տանիլ պատերազմին

մինչեւ վերջը ա՛յս, որչա՛փ սուղ ես, ո՛վ ազատու-  
թիւն, կեանք, ընտօնիք, ստացուածք ոչի՞նչ են քու-  
քովդ. պէ՛տք է նետուիլ մահուան ասպարէզը, եր-  
թա՛լ պէտք է Ազատութեան արիւնոտ ճամբան։  
Նեւոնդ. — Երթա՛նք ուրեմն, երթա՛նք քա՛ջ Սպա-  
րապետ։

Վարդան. — Այս՝ Երթա՛նք, բայց որի՛ յանձնեմ  
կեանքիս վարդը, Շուշանի՛կս, որ կրակ ու բոց, մէ՛կ  
ազդարար նշանիս կ'սպասէ, ձիուն նիւսը նետուելու-  
և ինէ առաջ արչաւելու հսմար։ Երթա՛նք, Երթա՛նք  
(Վարդան ու Նեւոնդ կը մեկնին)։

Նուշանիկ. (Մինակ, ձեռքին մեջ դրօւակը) — Ա՛լ կառ-  
կած չունիմ, ե՛ս այ պիտի Երթամ պատերազմի, (գուր-  
գուրանեով մը նայելով դրօւակին վրայ) այս՝ ե՛ պի-  
տի բոնեմ քեզ, իմ գեղեցի՛կ ձեռադործս, ո՛վ հայ-  
րենիքիս պաշտելի պատկեր. դրօւա՛կդ Մ ոմիկոնեան,  
(Տեղէն կը շարժի, զմայլանեով կը նայի դրօւակին վրայ)  
չէ՛, ուրիշ ո՛վ պիտի համարձակի քեզ բարձրացնել  
իր թեւերուն վրայ. (յանկարծ յուզուած) մա՛նաւանդ,  
երբոր, յազթական վերադառնվ մը, հօրս քաջամար-  
տիկ զունդերը, ուազմական երդերով մտնեն ազա-  
տազրուած հայրենիքիս ծո՛ցը. այն ատեն ես առջե-  
էն պիտի քոլեմ, քեզ ձեռքերուս մէջ պինդ բոնած  
ու զիխուս վերեւ բարձրացուցած։ մինչեւ մայրս,  
մեր զղեակին աշտարակէն պիտի դիտէ մեր ա՛նցքը...  
(խորասուզուած ու երազուն) Կտրիճներու զունդերուն  
մէջ պիտի կռուիմ ու վատերը պիտի զարհուրի՛ն...  
(վայրկեան մը կը նայի) բայց եթէ հայրս, անսալով  
մօ, ս արցունքներուն, չը զործադրէ իր խոստումը,  
ի՞նչ պիտի ընեմ... (առաջ կը նետուի ու վիտական

շետով մը) ո՞չ առ Հերնար ՌԱՄԻ. հայրս ուր եռ  
հո՞ն... (դուրս կ'ելլէ):

## ՊԱՏԿԵՐ Ա.

---

(Արտաշուսի արքունիքը, ընդարձակ դանիին մը)  
Յովսեփի կարողիկոս, Սահակ եպիսկոպոս, Խ-  
ովիսկոպոսներ, Վարդապետներ, նախարարներ, իշխան-  
ներ, Վասակ Սիւնի. յետոյ Ղետնիդ եւեց ու Վարդան  
Մամիկոնեան:

Յովսեփի կաք. — Սրբազն նզբա՛րք իմ ի Քրիստոս,  
որդեա՛կք իմ իշխանք և նախարարք հայոց աշխար-  
հիս. առա գումարուեցանք ըստ Փափաքանաց մեր  
սիրեցեալ հօտին: Գիտէ՞ք, որքան կարեւոր է այս  
օրուան Փողովք, որուն մէջ պիտի վճռուի մեր ազ-  
գին ճակատազիրը Ակմենուն ծանօթէ Վզրուիի հրովար-  
տակին պարունակութիւնը. կը մնայ պատրաստել  
պատասխանը, Հայոց Աշխարհիս եկեղեցական ու աշ-  
խարհական պետերուն, իշխաններուն համահաճ հաւա-  
նութեամբ. արդ, իօսեցէ՛ք, ի՞նչպէս արժանի է պա-  
տասխանել:

Սահակ եպիսկոպոս. — Ս. Հայրապետ, Վզրուիին հրովար-  
տակը ծայրէ ի ծայր անարգա՞նքէ... մըն է մեր կր-  
քոնքին ու հաւատքին զէմ, շտակը չարժեր պա-  
տասխանել:

Խովիսկոպոսներ, Վարդապետներ, — Մոլեռա՞նդ զրուածք  
մըն է...: Զրագաշափ ֆուճ զենին ջատազովա՞նքը;  
Վասակ. — Անարգանք, մոլեռա՞նդ զրուածք, ջատա-  
զովութիւն, բառե՞ր են բառեր, որոնց համար ժա-

մավաճառ չըլլա՛նք, հիմա խնդիրը պատասխանին վրայ է, գրաւո՞ր թէ անձամբ, ա՛ս պէտք է որոշել: Յովսկի կարող. — Սիւնեաց իշխանին իրաւունք կուտամ, խնդիրը պատասխանին վրայ է. բայց ըստ իս, անձամբ երթալ պատասխանել՝ վտանգաւո՞ր է, գրաւոր պատասխան մը զրկել՝ լաւագո՞յն է:

Ամենքը. — Գրաւո՞ր պատասխան, գրաւո՞ր:

Յովսկի կարող. — Լա՛ւ, միայն քիչ մըն ալ սպասե՛նք մինչեւ որ հասնին Ղեւոնդ երէցն ու Վարդան Մամիկոնեա՛նը երկու քի՛ն այ կարծիքը պէ՛տք է առնել. անոնք աւելի լաւ ուսումն սսիրած են հայրենիքի վիճակը. ժողովրդականու թի՛ւն ալ շատ ունին:

Վասակ. — Արդեօք տեղակութիւն չունի՞ն, չէ՞ն հրաւիրու ած, ինչո՞ւ ուշացան:

Յովսկի. կարող. — Զը հաւիրել կ'ըլլա՞ր. հիմա ուր ու են կը հասնին, (դրսէն ոննաձայն, ներս կը մտնեն Վարդան ու Ղեւոնդ, կարողիկոսին աջը կ'առնեն, ուրածանակի բարեւելով կը նստին) Սպարապե՛տ քաջ, ժողովին նպատակը ծանօթ է կարծեմ, յարմար գատեցինք որ պարտ ու պատշաճ պատասխա՞ն մը զրուի Վզրուկին, ի՞նչ է ձեր կարծիքը:

Վարդան. — Իմ կարծիքս՝ պատոե՛լ հրովարտակը, հաղորդել իրողութիւնը՝ Տիսբոն:

Յովսկի կարող. — Դու՞ք ինչ կը խորհի՛ք, Ղեւոնդ երէ՛ց:

Ղեւոնդ. — Ես, Ս. Հայրապե՛տ, Սպարապետին համամիտ եմ. ի՞նքը զիտէ զիտէ աշխարհիս իրական դօրութիւնը: (Ճայնը բարձրացնելով, խոծոռադեմ, ոտի կանգնած). Տիզրոն իշխող Յազկերտը՝ չկրնար իշխել հոս, բռնադատել մեր հոգիննը, իշխել մեր սրտերուն, ու

բո՞ց միա'կ իշխող'ն է մեր Տէր Փրկիչը. այս', թագաւորաց թագուոր կ'սուի, կա'յսր մըն է ամենազօր, տիեզերքը դողացո՛ւց, դայց իրաւունք չունի բոնաբարելու մեր խի՛ղճը. այս աշխարհիս տէ՛րն է, բայց ոչ երբէկ հանդերձեալինը... թո՛ղ տեղը ծանր նստի... : Վառակ.— (հեզնոս) Դիտենք, երէ՛ց, քաջ պերճախօս քարոզիչ էք. բայց, կ'աղաչենք, քարոզները չե՛ն որ պիտի ճամբու բերեն Միհրներսեհ Վզրուկը. Ճեր այդ խօսքերը՝ խրատներէ լսուելիք պատգամներ են. իսկ մենէ պահանջուածը՝ պատասխա'ն մըն է. ընդունող կամ... .

Յովսէփ Կարող.— Ի՞նչ, Սիւնեաց իշխա'ն, պատասխանը զեռ որոշու գեռ որոշ չէ՞՝ չպիտի՞ մերժենք Վզրուկի հրովարտակը։

Վառակ.— Ես ի՞նչ ըսի, կա'մ պիտի մերժենք, կա'մ պիտի ընդունինք. Ես բա՛ն մը չեմ զիտեր, ժողովին կա'մքն է. Ես պիտի համակերպիմ իր որոշումին։

Յովսէփ Կարող — Զեմ կարծեր թէ ժողովին մէջ զանուին այնպիսիներ, որ գեռ տարակուաին արուելիք պատասխանին իմաստին վրայ։

Վարդան.— Ես ըսի, պատասխանը՝ պատռել է հրովարտակը. այլապէս չե՛նք կրնար արաայայտել ժազովուրդին սրամտութիւնը։

Վառակ.— Սակայն աւելի լաւ չէ՞ նսխատեսել ամէն բանի վախճանը։

Յովսէփ Կարող.— Սիրելիներ, պարա'պ բան է Յաղկերտէ շնորհ սպասել. ան միտքը դրած է յնչել Քրիստոնէութիւնը։

Վեւոնիդ.— Քահանայ, վարդապետ, եպիսկոպոս, զնենք սրածայր գտակը, քուրմերուն կանանչ վաթ-

թոցը կապէ՞նք զլռւխնիս, ի՞նչ կ'ըսէք վասակ իշխան, զոցե՞նք եկեղեցիները և բանալիները զրկե՞նք Յազիերտի գենապետին. այդպէս լաւ կ'ըլլա՞յ...

Վասակ. — Ես բա՛ն մը չեմ զիտեր, ո՛չ ու հակառակը կը պնդեմ. միայն կը յիշեցնեմ որ նախ խորհինք, ապա գործենք. շա՛տ փափուկ խնդիր մըն է. երկրին կեանքին ու մահուան խնդիրը:

Յովսեփի կարող. — Այս՝ այս՝ լո՛ւ է խոհեմ շարժի՛: Ամենքը. — Խոհեմութիւնը՝ բացարձակ մերժո՛մն է, պարտ ու պատշաճ հերքո՛ւմ մը զրկել:

Յովսեփի կարող. — Ահա՝ քո է կը դնեմ. (Խուեարկութեան գործողութիւնը կը կատարուի. մասուկ մը կը պտտցնէ սափոր մը, խուեները կը նաւա՛է, յետոյ սափորը կը բերէ կը յանձնէ կարողիկային Սափորը կը բացուի՝ Խուեահամարը կ'ըլլայ): Մերժողական պատասխան: (Այս միջոցին Վասակ Սիւնին խոժու. խոժու նայելով չուրջը, տեղեն կ'ելլէ, ամենին ալ խումբ խումբ, կ'ոկո՞ն իրարու հետ խօսակցիլ. ժողովը խորհրդաւոր երեւոյք մը կը ստանայ): Աւ բեմն, եղբա՛րք իմ եւ որդեակը, որոշուեցաւ, պատասխան մը պիտի զրուի մերժողական. պիտի պաշտպանուի մեր կրօքին որբութիւնը, ճշմարտութիւնը. պիտի յայտնենք մեր Ա. Հաւատքին մէջ անխտիր մնալու մեր վերջին անփոփոխ տրամադրութիւնը, այնպէ՞ս չէ:

Ամենքը. — Այս՝ այս՝ այնպէ՛ս, այնպէ՛ս:

Վասակ (մտածկոց). — Ինչո՞ւ չէ, այնպէ՛ս թող ըլլայ: Դեւոնդ. — Ա, Հայրապե՛տ, վերջաբանը պէ՛տք է խնամով ըլլայ: Եթէ յարմար է, մեր Ա. Հաւատքին ճրշտութիւնը ջատագովելէ ետքը՝ թո՛ղ աւելցուի. ԱԱյս հաւատքէս մէ՛կը չկրնար խախտել մեզ, ո՛չ հրեշտակ-

ները . ո՞չ մարդիկ , ո՞չ հուրը , ո՞չ սուրը , ո՞չ ալ դառն  
ու սոսկալի տանջանքները : Մեր ինչքը ձե՛ռքդէ , ըրէ՝  
ուզածդ . քենէ տանջանք , մենէ յանձնառութիւն...  
վասակ . — Հերիք չեղա՞ւ , գեռ կա՞յ :

Դեւնիդ (նայն բափով կը շարունակէ) Թու սուրդ՝ ու  
մեր վիզերը , ի՞նչ , մենք աւելի՛ լա՞ւ ենք քան մեր  
նախորդները . որոնք իրենց կեանքը զոհեցին այս  
հաւատքին վկայութեան համար : Եթէ մենք անմա՛ն  
իսկ ըլլայինք , կ'արժեր մեռնիլ Թրիտոսի սիրոյն  
համար . ինքը չէ՞ր որ զմեզ մահէ փրկելու համար՝  
ինքը մեռաւ , ինքը՝ որ անմա՛ն էր : Ա՛յ գուն , ով  
արքայ , մի՛ հարյուֆուրչ ըներ , մեր ուխու՝ մար-  
զուն հետ չէ՛ , որ խափուած ըլլանք . Աստուծո՛ւ հնտէ՛  
անքակտելի՛ , անջնջելի ուխտ մըն է , պիտի տեւէ  
մինչեւ յաւիտեան : Եթէ մեզի այս հաւատքով թո-  
զուս՝ այս երկբի մէջ քենէ զատ ուրիշ տէր չունինք  
ու չե՛նք ճանչնար . իսկ երկնքի մէջ ալ Յեր Յիսուս  
Թրիտոսի հետ՝ ուրիշ Աստուած չե՛նք փոխեր , քանի  
որ ուրիշ աստուած չկա՛յ . իսկ եթէ տակաւին յա-  
մասիս , ահաւասիկ մենք , չուտ ըրէ՛ , ինչ որ կ'ուզես:  
Ակենիլի . — Աւրիշ պատասխան չուզեր , ոչ աւելի ոչ պակա  
Յովսկի կարող . Այժի կ'ելլէ , բոլոր ծողովականները  
նոյնը կ'ընեն ) — Աւխտե՛նք սիրելի՛ք իմ ուխտե՛նք  
մեր կեանքով որ մեր մահով հաստատ մնալ մեր այս  
որոշման վրայ :

Ամենիք . — Կ'ուխտենք ու կ'երդնունք հաւատար-  
մութէ՞ւն :

Դեւնիդ . — (Խաչը վեր բարձրացուցած) Անկցի՛ Որ-  
միզգը , խաւարի՛ Միհր արեւը :

Վարդան . — Կեցցէ՛ պատերազմը , կեցցէ՛ Ս . պուտե-  
րազմը :

Ամենիր. — Կեցցէ մեր հաւատքը

(վարագոյրը կամաց կամաց կ'իջնէ, մինչդեռ ժողովականները կը շրջապատեն կարողիկոսը) :

Յովսէփ կարուլ. — (բազկատարած՝ աշխերը՝ վեր, երկինք բարձրացուցած) Տէր, Փրկէ՛ Հայաստանը :

## (ՎԱՐԱԳՈՅՐԸ ԿԻԶՆԵ)

### ԱՐԱՐ Բ.

(Տիգրոնի մեջ պարսկական արքունիքը

ՏԵՍԱՐԱՆ Ա.



Յազկերտ. (Արշալոյսէն առաջ արքնցած, գանոյի պառագանին վրայ կեցած կը մտնախսնէ) : Մի՛հր-Արեգակ տիեզերքի՛ս արարիչ, ծագէ՛, շուտով ծագէ՛, ահա՛ կը փախչին հալածական ողինե՞րը, որոնք երեւակայութիւնս չարչրկեցին աճքողջ գիշե՞րը... : Թագաւորո՛ր եմ, թագաւորներո՛ւն թագաւորը : Արեւմտեան կայսըրութիւնը կը դողայ, կը սառի՛ անունէս. հիւսիսու հարաւ, արեւելք ու արեւմուտք, իմ աղամանդէ մականիս ներքեւ կը հեծեն... : Բայց ես հոս, Տիգրոնի արքունի՛քը, կարդ մը գուշակներու, աստղաբաշխ քուրմերու գործիքը, գենալետի մը խաղալի՛քը դարձեր եմ... : Ի՞նչ կը նշանակէ տիրել ո՛չ, ո՛չ, բա՛ն մը չնաշանակեր, տիրել կայ՝ հողին, տիրել

չկա՞յ հոգիներուն, ա՞յս, ճի՛շդ ա՞յս է Հայոց պարս-  
պան, — Այս ա՞զգը, զարհուրելի՝ զանգուած, ծերա-  
ցուց զիո, առ ի՞նչ յամառութիւն... : Բայց ինչո՞ւ  
հաւածել այսպիսի տոկուն ու արի ժողովուրդ մը :  
Աւիլի բաւ չէ Հայերուն կրօնքը պահպանել, իրենց  
հաւատարմութիւնը չկորսնցնելու համար : Հայաստա-  
նը չէ միթէ Բիւզանդական կայորութեան բանալին,  
Կովկասի կիրճերուն պահապա՞նը, իմ տէրութեանու  
ամենամօտ հարեւանը, հետեւաքար և ամենավտանգա-  
ռո՞րը, եթէ շահագործել չզիտնա՞մ... : Ա՛չ, ո՛չ, ոճի՞ր է,  
ոճի՞ր, այս ազգը ձեռքէ հանելը, պէ՛տք է հիմա կան-  
չեմ վէզի՞րու, որ մօտէն կը ճանչնայ Հայաստանը... :  
(կ'երայ դուռը կը զարնէ) Թո՛ղ զայ նայինք ի՞նչ  
խորհուրդ պիտի տայ : (Յազկերս իր զանին վրայ բազ-  
մած է, հեռուեն, զետնամած խանաբնուրեամբ կը յա-  
ռաջանայ Վզրուկը.)

### ՏԵՍԱՐԱՆ Բ.

---

Միհրներսին. — Տէ՛ր արքայ, յաւիտեան տպրէ՛:  
Յազկերս. — Եկո՞ւր, Մի՛հրներսին, ի՞նչ լուրեր ըերիր,  
խօսէ՛ նայիմ :

Միհրներսին. — Լուրերուն լո՞ւրը, Տէ՛ր արքայ Հա-  
յաստանէն :

Յազկերս. (ընդմիջելով) — Հայաստանէ՞ն, ի՞նչ կայ որ... :  
Միհրներսին. — Եկան Հայ նախարարները, ուղղակի  
տարուեցան... :

Յազկերս. — Ո՞ւր տարուեցան :

Միհրներսին. — Օտարներուն բա՞նտը. Դենպետին հրա-  
մանով :

Յազկերս. (մածկու) — անշուշտ, բայց՝ (լրջօրեն), մօ-  
տեցի՛ր կ'ըսեմ, առելի մօտեցի՛ր :

Միհրներսեն. — (ապօած. կասկածոս) Տէ՛ր, Զերդ Արեգակ-  
նափայլ Միծութիւնը շա՞տ յուղուած կը տեսնեմ,  
ի՞նչ տիսուր բան կրնայ միջազնել Զեր արքայական  
արփիաճաճանչ ճոկա՛տր . . .

Յազկերս. — Ոչի՞նչ. այս զիշեր քո՛ւնս փախաւ քիչ մը:  
Միհրներսեն. — Արքայից արքային արեւնե՛րը շատ.  
թո՞ղ նարին Վեհափառութիւնը ներէ որ յիշեցնեմ թէ՝  
Հայոց նախարարները . . .

Յազկերս. — (ընդհատելով) Այս՛ կը յիշե՛մ, բայց այս  
զիշե՛ր . . .

Միհրներսեն. — Երկի՞նք, ի՞նչ կը լսեմ, ի՞նչո՞ւ այս  
զէմքը զունաթափ ի՞նչո՞ւ այս աչքերը մահանշոյլ.  
Հարազուշտկ նախազգացումներէ կը տանջուի միտքու:  
Յազկերս. — Մի՛ վրդովիր, սիրելի՛ Վզրուկս, մի՛ տա-  
ռապիր, այս զիշեր երա՛զ մը տեսայ:

Միհրներսեն. — Բարեբաստիկ երա՛զ, կենդանի արեով:  
Յազկերս. — Ի՞նչ արեւ, չա՛ր երա՛զ մը . . .

Միհրներսեն. — Տէ՛ր արքայ . . .

Յազկերս. (ծանրախոն) — Պարատիս արեւմտեան դրան  
առջեւ կեցած, կը դիտէի արքունական դրախտիս  
զեղեցկութիւնը. մօտերը, քանի մը քայլ անդին,  
տապարի ձա՛յն զարկաւ տկանջիս մահասարսո՞ւռ ու-  
սլա՛զ ձայն. տեսա՛յ . . .

Միհրներսեն. — Միհր-երեւ, բարի՞ն ըլլայ:

Յազկերս. — Շատրուանիս եղերքի՞ն հսկայ կաղնին, որ  
կը հեծէր տապարին բնդատ հարուածներուն ներքեւ,  
կաղնիին չուրջը թափոր բոնած՝ կը կաքաւէին պա-  
լատիս քուրմե՛րը. սրբազան կըակ կաղնիին ոտքը կը

միար, մինչդեռ տապարը կիջնէր յանդաղ, ու ամէ՛, իջնելուն՝ կաղնին, չլոձգային պրկու մներով, տապարմի նշաններ ցոյց կու տար:

**Միհեներսն.** — Մե՛ծդ Արմիդդ:

Յազկերս. — Ի՞նկա՛ւ կաղնին վերջապէս, ծածկե՞ց շառրու անին չուրը, որ իսկոյն արի՛ն դարձաւ, ու տապարին զլուխը թազուեցաւ բունին մէջ, իսկ կոթը ձեռքը մնաց Դենապեախա, որ ապուչ ապուչ կը նայէր մերթ կրակին, որ կը միտար մերթ չուրին՝ որ կ'եռ որ, թափոքը կը դառնար, մուխը բռնեց ամբո՞ղջ պայսաին հրապարակը . . . :

**Միհեներսն.** — Ազ Միհը ամենազօք, լուսաւորէ, լուսաւորէ՛ խաւարը:

Յուզկերս. — Աչքերս խոցուեցան մուխէն, խեղդուխը բա՛ն մը չէր, հեռաւսր, եղերական ձա՞յն մը կը հառնէր ու կը նուազէր ականջիս մէջ. «Ի՞նկա՛ւ Տիզրոն, մարեցա՛ւ Արեաց արեւը» . . . :

**Միհեներսն.** — Քա՛ւ լիցի, Տէ՛ր արքոյ:

Յազկերս. — Ու ես, քրտինքի հեզեզի մը մէջ, արթընցայ, զես կարծես թէ նոյ՛ն դամբանային ձա՞յնն է որ ականջիս կուզայ ու կը սառնցնէ ըզեզս:

**Միհեներսն.** — Երեւակայութեան ունա՞յն խազեր, Տէ՛ր արքայ, յաւխտենակա՞ն է տիեզերակալ Յազկերս տէրութիւնը:

Յազկերս. — Քայց տապա՞րը. բայց դենապե՞տը. քուրմերուն թափո՞րը, մու՞խը, արիւն-ջո՞ւրը:

**Միհեներսն.** — Ի՞նչ մեկնութիւն տալ կը հաճի Զեր վեհափառութիւնը, Տէ՛ր արքայ:

Յազկերս. — Մեկնութիւն . . . Դենապեախին դո՞րծնէ . . . :

Միհրներսեն. — Կանչե՞նք, Տէր արքայ,

Յազկերս. — Տե՛ղը մնայ, տե՛ղը :

Միհրներսեն. — Սակայն ի՞նչ կը խորհի արդեօք արքայից արքան՝, ձերբակալուած ու հոռ բերուած Հայոց նախարարներուն վրայ. ի՞նչ պէտք է ընել :

Յազկերս. — Առանց զենոլետին բա՛ն մը չե՞նք կրնար ընել. ա՛ն բերել տուաւ, ո՛ն հիմա թո՛ղ որոշէ ի՞նչ ընել պէտք է :

Միհրներսեն. — Տէ՛ր արքայ, իմ ամենախոնարհ կարծիքովս, պարա՛պ բան է այդ նախարարները հոս վար դնել, պահել, Հայ ժողովուրդը մինչեւ իր վերջին շունջը յամառ, կառչած պիտի մնայ իր պաշտած նազովրեցի Հրեային. իսկ տուժողը պիտի ըլլանք մենք :

Յազկերս. — Ի՞նչ զիտես, ես այնպէս կը հաւատամը թէ՝ անստառն տէրութեանս կործանումը Հայաստանի ապստամբութեան երեսէն պիտի րլլայ :

Միհրներսեն. — Նոր բան մը չէ՛ (գլուխը կ'երեցնէ) տարինե՛ր առաջ զուշակուած է արդէն. մեր հիմնը քանդողը՝ մեր բոնած քաղաքականութիւնն է մասնաւորապէս Հայոց նկատմամբ :

Յազկերս. — Ո՞ր քաղաքականութիւնը,

Միհրներսեն. — Կրօնային հալածա՞նքը :

Յազկերս. — Դենպետի՛ն ըսէ՛, դենպետի՛ն...:

Միհրներսեն. — Ո՞վ է դենպետը, եթէ չվայելէ բարձր հովանաւորութիւնը Տիեզերքի տիրապետող Յազկերտին, հո՛ղ է ան ու մոխիր :

Յազկերս. — Սակայն այդ մօխի՛րը կուրցուցեր է մեր ոչքերը. չե՛նք տեսներ իսկը, արդ սրը լո՛յաը, խաւարին մէ՛ջ կը խարխափինք յաճախ :

Միհրներսն.— Մի՛ խռովիք, Տէր արքայ, դիւրիւն է ամէն բան, երբ որ բարեհաճի Զերդ Վեհափ սոսւթիւնը տեղամ մը կանչել ալ գենպետը, կանչե՞նք, թո՛ղ գայ, տեսնե՞նք, ի՞ւչ է Միհր-Արեւուն կամքը, դործադրե՞նք այդ կամքը, որպէսզի չըլլա՛յ թէ յետինը չար ըլլայ քան սոսաջինը,

Յագիերս.— Այնպէ՞ս է, գենպետը թո՛ղ գայ, կատարինը ուից կամքը: (Միհրներսն դուրս կ'ելլէ զետնամած խոնարհութեամբ եւ եւ նեռանալով) Խեղճ Վզրուկինծի պէս ի՞նքն ալ բռնուէր է մոլեսանդութեան տիտուն, առանց գենպետի չկրնար ապրիլ, ո՛չ ալ իր սեփսկան կարծիքն ունի. (մելամաղձոս) Թշուա՞ս կառովորութիւն, որուն սանձը կրո՞նի պաշտօնէի մը ձեռքը յանձուէր է; ես գահիս վրայէն... (Միհրներսն կը մտնէ.)

Միհրներսն.— (զետնաբար խոնարհութեամբ) Տէ՛ր արքայ, հիմո՛ կը մտնէ գենպետը:

Յագիերս.— (միւս երազուն) Կ'իշխեմ ծովուն ու ցամաքին, իսկ գենպետը:

Միհրներսն.— Այո՛, հիմո՛ պիտի գայ:

Յագիերս. (շարունակելով իր մենախօսութիւնը, միւս երազուն) — Կ'իշխեմ ի՛մ հողիս, խղճիի՞ս, կեանքի՞ս ու դահիս վրայ, այո՛, գենպետը կ'իշխեմ թազի՞ս ալ. աէրութեա՞նս ալ, բովանդա՞կ տիեզերքին...

Միհրներսն. (նոր սրափած) — Ո՞չ երբէք, ես ատանք քան մը չեմ կրնար ընդունիլ. ես որ վզրուկն եմ Արքայից արքային ու հաւատարիմ զրուպը:

Յագիերս. ... Դո՞ւն այզպէս կ'ըսես, բայց ես ինքզինքս չե՞մ ճանչնար, չե՞մ զիտեր թէ ո՛վ ես և ինչ եմ...

**Մինրներսի.** *Տէ՛ր արքայ,* (նայելով դեպի գուռը) *ա-*  
*հա՛ կուգայ,* (դենպետը ցոյց տալով) *—*

### ՏԵՍՄՐԱՆ Դ.

(Նախորդները, Դենպետը)

**Դենպետ.** (դռնեն ներս կը մտնի, զլուխը խոնարհած, բազ-  
կատարած առաջանալով, սրածայր գտակովը, դեղին նո-  
դարափովը, կ'ողջունի) *— Արքա՛յդ արքայից, Միրեց-  
եա՛լդ աստուծոյ.* *ապրէ՛ յաւիտեան :*

**Թագիերս.** (մըրմըրալով) *— Ի՞նչ ալ սիրեցեալ,* (բարձր  
ձայնով) *Եւ դուն, ո'վ իմ տէրութեանս վահանը, ո'վ*  
*ըլլաս, ի՞նչ լուր :*

**Դենպետ.** (նսնդիսաւոր ու խորհրդաւոր) *— Այսօր Արե-  
ւելքը կը խայտա՛յ, Հիւսիսի վայրենիները դարձի  
եկան. ահո՛ւասիկ Արեւմուտքէն դունդագունդ կը  
դիմեն Արքայից արքային ոտքը, Տիգրո՛ն կը խոնը-  
նուին հեթանոս իշխանները . . .*

**Թագիերս.** *— Ի՞ր իշխանները կ'ըսես:*

**Դենպետ.** (արհամարենու ծպիտով) *— Սա մեղի Քրիստո-  
նէութիւն քարոզող Հայո՛ց իշխանները:*

**Թագիերս.** (լրջօրէն) *— Կարծեմ մե՛ր կողմէն եղաւ ա-  
տանկ փորձ մը, Միհրներսեհին նամակին պատասխա-  
նը զրկած էին, ուրիշ ո'չինչ :*

**Դենպետ.** *— Բայց այդ պատասխանը կը վայելէ՞ր, Տէ՛ր  
արքայ:*

**Թագիերս.** *— Իրենց հաւա՛տքը կը քարոզէին:*

**Դենպետ.** *— Եւ արքայից Արքային բարձրագոյն հաճու-*

թի՛, նր կարհամարէին :

Յազիերս. — Ի՞նչո՞ւ...

Դենիպես. (բազկատարած, սրմտութեամբ մը ե՛ս եւ բառուելով) — Կ'եցցե՛ս յաւիտեան, Արքա՛ց աստուածնե՛րը չը բարկանա՞ն իրենց տնմահ փառքը անցնելու յանդրդող ա՛փ մը Հայերը՝ պէ՛տք է որ պատժուին:

Միհրներսին. — Զը պատժուեցա՞ն, զեռ ի՞նչ պիտի ընելինք, Հա՛յր գենազետ, կալանաւոր՝ հոս բերուեցան. անսովոր նախատինքներո՞վ անարդուեցան, ալ ի՞նչ ընէինք :

Դենիպես. (շարունակելով միեւնոյն սրմտութեամբ. մոլուանդութեան բոցով) — Անշէջ կրա՛կը որ կը վառի Ասյր-Ասրու շանին մէջ, Արեւը որ կը շոգչողայ կապոյտ խորսնէն, Ար Իիզդ՝ բարութեանց հայրը, մեր Ա Դենր, զարաւոր աւանդութիւնները, ասոնք ամէնքը ծաղրե՛լ... ու զեռ լո՛յսը վայելե՛լ Միհր-Արեւին, Տէ՛ր արքայ, չզայրանան արդար աստուածնե՛րը (իբր քեզողը բռնած) :

Յազիերս. — (նելսիերս) Լա՛ւ, լա՛ւ, ի՞նչ ընենք որ չը զայրանան, բսէ՛ որ կատարինք:

Դենիպես. — (բազկատարած) Ա՛յս է զից կամքը. ի ներկայութեան Մեծիդ Վեհափառութեան, բերել կեցնել այս ապստամբնե՛րը, նախ խոստումներով ողոքել, յետոյ եթէ մերժնն, տանջանքներ սպառնալով. մինչեւ որ հրաժարին իրենց ծաղրելի աղանդէն, ու դառնան ի լոյս Արեգակին :

Միհրներսին. — Եթէ, ո՞վ մեծդ Դենիպետ, չյօժարին, այն առեն ի՞նչ ընել պէտք է :

Դենիպես. — Այն առեն իր խորհինք, առայժմ զից հրա-

մանքն է դարձնել զանոնք մոլորութենէն և առաջինը-  
դել ճշմարտութեան ճամբան:

Յազկերս — Բերուածները որո՞նք են հազարադե՛մ:  
Մինեներսին. (գրութիւն մը ձեռքը, մեջտեղ կուզայ,  
բարձրածայն կ'սկսի կարգալ):

Վասակ	Անուն	Սիւնեաց	Տոհմէն
Վարդան	»	Մամիկոնեանց	»
Ներշապուհ	»	Արծրունեաց	»
Արտակ	»	Մշտունեաց	»
Գագէշոյ	»	Խորխոսունեաց	»
Մանէն	»	Ապահունեաց	»
Արտակ	»	Մոկաց	»
Վահան	»	Ամատունեաց	»
Գիւտ	»	Վահեւունեաց	»
Շմաւոն	»	Անձեւացեաց	»

Ասո՞նք են կանչուածները, ու արքունիքը բանտարկ-  
ուածները, ամէնքն ալ ներկայանա՞ն,

Յազկերս. — Ի՞նչ պէտք կայ. երկու, երեքը, կը բաւեն  
հոս թո՛ղ բերուին Վասակ Սիւնին, Վարդան Մամի-  
կոնեանն ու Ներշապուհ Արծրունին, այդ երեք լսե՛նք  
նայինք:

Մինեներսին. — (դուրս կ'ելլի խոնարհութեամբ):

Յազկերս. — Դուն, ո՛վ կրօնից պետ, դուն հո՛ս կե-  
ցիր, քովէս մի հեռանար, պէտք ունիմ քու ներ-  
կայութեանդ:

Դենայք. (խոնարհելով կը նսխ) — Ծառա՛յ եմ ամենա-  
նուասդս, Արքայից արքայիդ:

Յազկերս. — Երբէկ չյուզուիս, մինչեւ վերջը մտի՛ք ը. նենք, թո՛ղ խօսին:


Դեմապես. — Ես չեմ կրնար հանդուրժել, եթէ յանդըդ-նին դէմ խօսիլ եւ մեր կրօնը ծագրելու չտի առաջ տանին իրենց լըրութիւնք:

Յազկերս. — Ի՞նչ կ'ուզեն թո՛ղ ընեն, մինչեւ վերջը մտիկ ընենք:

Դեմապես. — Ծառա՛յ եմ, Տէ՛ր Արքայ, համբերելու ջանք չպիտի խնայեմ:

Յազկերս. — Այս՛, այս՛, ամէն մեզմ միջոց դործածէնք, մինչեւ որ յաջողինք դարձի ըերել այդ դժբա՛զտ մո-լորեալները, ու մե՛նք ալ ազատուինք:

### ՏԵՍԱՐԱՆ Գ.



Նախարարները, Մինիներսին, Վասակ, Վարդան, Ներշա-պուհ, ոսիկաններ

Մինիններսին. — (յարգանիք շարժումով մը) Ահա՛ ասիկ Տէ՛ր Արքայ (ձեռքովը մէկիկ մէկիկ առաջ կը բերէ), Վասակ Մինինեաց իշխանը, Վարդան Մամիկոնեա՛նն ու Ներշապուհ Արծրունին, Զեր Վեհափառութեան հպա-տակ ծառաները:

Յազկերս. — (ծուռ ծուռ նայելով դենպետին, յեսոյ Վա-սակին) Առա՛ջ եկուր նայիմ, Մինինեա՛ց իշխան, ի՞նչ-պէս էք հիմա, հանգստացա՞ք:

Վասակ. — Շնորհիւ Շահինշահիդ Աշխարհի, հանգի՛ստ ևնք այնպէս ինչպէս կ'ըլլայ սպանդանոց տարւող ոչ-խա՛ր մը:

Յազկերս. — Բայց դուք ինչո՞ւ սպահնդանոց տարուիք, ինչո՞ւ չղիտնաք ձեր յարզը, ձեր պատիւը։  
Վարդան. — Տէ՛ր Արքայ, մեր պատիւը՝ մեր երկիրը թողեր, հո՛ս ենք եկեր, փառքէ մերկացած։  
Յազկերս. — Դուն, Մամիկոնեան նո՞ր սպարապետ (հեղնոց) դոնէ դուն երբէ՞ն իվեր սորվեցար ա՛յնչափ աստուածաբանութիւն. նախնիքներդ Կոնֆիւկիոսի հաւատացեալներ, երբէք կրնայի՞ն դուչակել թէ՛ իւրենց սերունդէն մէկը պիտի ելլեր, Հրեայ մը պիտի պաշտէր . . . (Քրիզիներով յիմա՛ր զաղափար, Հրեայ մը պաշտել իբրեւ Աստուած և Աստուծոյ Որդի՛ . . . (Խոժոռապէմ) թողէ՛ք թողէ՛ք կըսեմ այդ ցնո՞րդը . . . : Կուրութի՛ն, տխմարութի՛նը . . . :

Վարդան. — Տէ՛ր Արքայ, մեր Հաւատքը՝ վսեմ կոյրնէ որ կը տեսնէ ինչ որ չե՛ն կրնար տեսնել դենպետին եղան աչքե՛րը . . . , Մենք կոյր թող կոչուինք, հողչէ՛, միայն թէ՛ չը շլանանք ձեր Արեւին պատրանքներէն։

Յազկերս. — Կապտնքի ու բանտի մէ՛ջ անդամ կը պահէք նոյն յոխորտա՛նքը, (բորբոքած) ահա՛ կ'ըսեմ, ցնորա՞ծ զլուխները, հրաժարեցէ՛ք աւելորդ պաշտամունքներէ. ի՞նչպէս կրնաք ուրանալ ծիեզերքին Աչքը, յոյս կեանք ու զօրութիւն պարզեւող Արեդա՛կը ։ Ներշապուհ. — Կը տեսնեմ որ, Տէ՛ր Արքայ, Դուք, (հեղնոց ճպիտով) քան զգենալետն աւելի հմուտէք ձեր Դենին, որ դժբաղտաբար, (կմկմալով) խա . . . խուտտէ՛: Դենիպետ. (ծուռ ծուռ նայելով Ներշապուհին եւ կատալութեան շարժումներով) — Խելադա՛ր . . . Արքայից արքային առջե՞ւ ալ կը յանդգնիս հայհոյել . . . :

Ներօապուհ. — (զալրագին) Դուն, ո՞վ դենպե՞տ, տեղդ  
ծա՛նը նասէ՛, Արքայից արքային առջեւ կը գըտ.  
Կու ինք, չափաւորէ՛ լիզուգ... .

Յազկերս. — Ի՞նչ անտաշ գլուխներ ու բոնկած ըղիղ-  
ներ. (Ներօապուհին) ինձի՛ նայէ՛, հոս Հայաստանի  
լիոները չե՛ն, Արծրունեաց սահմաններէն ամիսնե-  
րով հեռու ենք... .

Ներօապուհ. — Հոյ իշխան մը, սոսկական հա՛յ մը ան-  
դամ, ո՛ւր ալ երթայ Հա՛յ է, և իր հայրանիքը չու-  
րանար, Գիտցա՛ծ ըլլաք, Տէ՛ր Արքայ, որ դենպետի  
մը, քուրմերուն ձեռքը խաղալի՞ք մըն էք գարձեր... .

Յազկերս. (ցած ձայնով, ապօահար) — Խաղալի՞կ մը,  
ինչէ՞ն զիտէ որ ես, (բարձրածայն) վե՞րջը... .

Վարդան. — Վե՞րջը, ի՞նչ պիտի ըլլայ. Հայաստանի  
պէս չքնաղ երկիր մը պիտի ձեռքէ հանէք, ուրիշ ոչ-  
ի՞նչ.

Յազկերս. — Ի՞նչ պէս :

Վարդան. — Եա՛տ պիւրաւ ու շա՛տ մօտէն, եթէ դեռ  
հոս արդիլափակէք Հայոց Աւագանին ու բովանդակ  
Հայաստանը մատնէք անիշխանութեան;

Յազկերս. — Հոգ մի՛ ընէք. ձեր տեղը բռնողներ ու-  
նիմ, իսկ զուք, ապերախտնե՛ր, անդամ մըն ու չէ՛ք  
կրնար տեսնել երեսը ձեր լեռներուն. քանի որ այս-  
պէս կը յամառիք:

Դենապեր. — Տէ՛ր Արքայ, պիտի զզջա՞ն ասոնք շա՛տ  
ու շ... շա՛տ սուզի պիտի նստի իրենց այդ զզջումը :

Վարդան — Վազը յայտնի կ'ըլլայ զզջացողը :

Վասակ. — Արքայից արքային ամենաողորմած Յազ-  
կերտի բարձրագոյն կամքէն կախուած բան մըն է,  
եթէ բարեհաճի, ամբողջ Հայաստանը այսօր ես ա ին-

նասիրական երկի՛րը կ'ըլլայ . ժողովսւ րդն ալ՝ իր աշ-  
խաբհական ու եկեղեցական պետերով՝ իր հլու հա-  
ւատարիմ ծառան ու հպատակր . . .

Յազկերս . (Ծիչ մը հանդար) — Եիւնեաց իշխա՞ն , շատ  
լաւ կը խօսիս , միթէ մենք չե՞նք ուզեր որ այնպէս  
ըլլայ :

Վասակ . — Զեր Վեհափառութըւնը կ'ուզէ . բայց . . .

Յազկերս . — Բայց ի՞նչ , շարունակէ :

Ներշապուհ . — Բայց Դենպե՞տը . . .

Վարչան . — Բայց քուրմե՛րը չեն ուզեր . . .

Դենպես . — Քուրմերը շա՞տ կը նախատէք , կը զայրա-  
ցընէ՞ք աստուածները :

Յազկերս . (Դենպետին) — Դուն կեցի՛ր . . .

Վարդան . (բարկացած առաջ նետուելով) — Ի՞նչ կ'ըսէ ,  
Տէ՛ր Արքայ . ի՞նչ կերգէ ձեր դենպեաը ալ ատենն է  
դիմակր պտտուելու , Դո՛ւք . (ինզինքը ամփոփելով) Տէ՛ր  
Արքայ , լաւ չէք ըներ , երբ ձեր տէրութեան հաւա-  
տարիմ ու անձնուէր հպատակները կի չարչարէք այս  
կերպով . դուք , Տէ՛ր Արքայ , ձեր ձեռքով , ձե՛ր դա-  
հին տակ անդունդ մը կը բանաք ու ձեր տէրութեան  
գերեղմանը կը փորէք . . .

Յազկերս . (ցած ձայնով մեկուսի) — Տապա՛րը . . .

Վարդան . (արթնակելով աւելի եռանդով) — Ու դուք ,  
ձեր թաղն ու մակա՞նը կը թաղէք , ո՞վ թաղաւոր ,  
ապերախ'տ էք , ապերախտ , ի՞նչպէս շուտ մոռցաք  
մեր ծառայութիւնները . (անդին Վասակ ինչզինք կ'ու-  
տէ զմզոնի շարժուձեւերով) ի՞նչպէս շուտ մոռցաք ,  
դեռ քանի՞ աարի եղաւ , ձեր արքայական փախստա-  
կան դունդերուն օդնութեան վազեցի այրուծի քա-  
ջերովս . . .

Յազկիերս. — Մենք այդ բաները չենք ուրանար, միշտ  
կը յիշենք:

Վասակ. — Եթէ յիշէիք, Տէ՛ր Արքայ, մենք հիմա  
հոս, այս նուաստացումին, այս ստրկութեան մէջ  
չեինք գտնուիր...

Վարդան. — Այսուհետեւ պիտի տեսնէք թէ՝ մեր հոս  
արդելափակ միալը՝ քանի՛ աղէտներու գուռ պիտի  
բանայ, վազը կ'իմանաք, հարեւան թշնամի ցեղերը  
ինչողէս պիտի ասպատակեն ձեր տէրութեան սահա-  
մանները...

Յազկիերս. — (խորիս սբաց) Իմ կետնքս՝ պատերազմնե-  
րու շա՞րք մըն է, ջրի ձայն կուգան ինծի այդ այդ  
չարագուշակ սպառնայիքնե՞րը, (ցած ձայնով) բայց  
տապա՞րը . . (կը խորասուզուի սեւ կասկածներու մէջ):

Դեմպիես. — (բարձրագոչ) Արքայից Արքային փառքն ու  
պարծա՞նքը կը կազմեն իր ջերմեռանդութիւնը,

աստուածնե՞րը կը պահեն Նորին Վեհափառութեան  
թանկաղին տարիները, անսասա՞ն է տէրութիւնը . .

Ներքապուհ. — Սասանեա՞ն տէրութիւնը կ'ըսէք:

Դեմպիես. — Դուն Արծրունի՛, զուն չափը կ'անցնես.

(Կիրքով կը ցատկէ տեղեն, նեռանալ կ'ուզէ):

Յազկիերս. — Հանդարտէ՛, ո՛վ գենպետ, հանդարտէ՛,  
հիմա կը տեսնեն, (դառնալով երեքին Զեզի՛ ևմ, կը  
լոէ՞ք, պիտի հրաժարի՞ք ձեր ծաղրելի աղանդէն թէ  
ոչ ըսէ՞ք, մէկ բառով, այս՛ կամ ո՛չ:

Վարդան. (առաջ նետուելով) — Ո՛վ Արքայ, կը կարծէ՞ք  
թէ եկեղեցիները թագաւորներու պարզեւներ ըլլան.  
Քա՞ւ լիցի . . , Զինուորներու քաջութեան աւա՛րն ալ  
չեն անոնք. ո՛չ ալ գեւերու շնո՞րհքը, անո՞նքը Տէ՛ր

Արքայ, միա'կ Աստուծոյ, Արեւին ու աստղերուն ծովերուն ու ցամաքին Արարիչ Աստուծոյ, Ամենակալին շնորհքն են. զիտէ՞ք.

Յազկերտ,— է՛ս, ի՞նչ ըսել կ'ուզես :

Վարդան. (ԵԵՏԵԼՈՎ աւելի սրմանամբ) — Բաել կ'ուզեմ թէ՝ սպառնալիքներդ անօգուտ են. չարչարանքը՝ մեր հաշուեգրքին մէջ է. իսկ մեռնիլը՝ մեր տխտն է :

Յազկերտ. (Կատղած ու փրկիրած) — Վզրուկ, ա՛ռ ասոնք ու բա՛նտը թող նետեն. (այս միջոցին դենալետը զլուխը կ'երեցնի վրեժինդիր գոհունակուրեամբ մը, մինչդեռ Յազկերտ խօսքը երեքին ուղղելով) — Ահա՛ կ'երդնում, Միհր-Արեւուն վրայ, ա՛լ յոյսերնիդ կտրեցէ՞ք ցանկացածը նորէն գտնելէ. երդումս՝ երդում է, կը կրկնեմ ու կ'երեքնեմ ահա՛... Սազաստա՞ն պիտի աքսորել տամ ձեզ անկոխ ճամբաներէ, որպէսզի ձենէ շատերը ճամբան մնան խորշակահար : Իննալետ. (հեզմնած) — հոգերնի՞ն էր. Քրիստոսի ետեւէ՞ն պիտի հասնին :

Վասակ.— Այդ անդթութիւնը չի գործեր Արքայից Արքան :

Յազկերտ. (առանց փոխելու սպառնական ԵԵՏԵՐ) — Ողջ մնացածները պիտի փակեմ անել զնտաններու մէջ և անմարդաձայն բերդերու խորքը... Ասո՞վ ալ չի՛ վերջանար. անթիւ զօրքեր պիտի արձակեմ ձեր երկիրը, փիղերովս մէկտեղ. զերի՛ պիտի վարեն ձեր կիներն ու զաւակները : Ձեր վա՛նք ու վկայարան կոչած եւկեցիները՝ հիմէն պիտի փլցնել տամ, ո՞վ պիտի կրնայ արգիլել : (Վզրուկին դառնալով) Ա՛ռ, տար ասոնք մահապարտներուն զնտանը...

Ներշապուհ. (Երբոր կը տարուին, ետին դառնալով) —  
Բարբարո՞ս բռնաւոր... .

Դենալես. (Ետեմուն) — Էլիրրե՞ր, Հայոյիչնե՞ր, անհաւ-  
առանե՞ր... .

Յազկերս. (Դենալետին) — Ե՞ն, ուղածդ ա՞ս էր, զեն-  
պե՞տ :

Դենալես. (ոսքի ելլելով ու թեւատարած վեր նայելով) —  
Յաւիտեան տպրէ՛, Տէ՛ր Արքայ, անժմահ աստուած-  
ները՝ ձեր գործը կ'օրհնեն, արդարութիւնը գործա-  
գրեցիք, Արմիզդ հրձուեցա՞ւ :

Յազկերս. — Բայց եթէ այդ քարզլուխները յամառին,  
այն տոեն ի՞նչ կ'ըսեն աստուածները... .

Դենալես. (Դիւային ժպիտով մը) — Տէ՛ր Արքայ, այն տ-  
ոեն ամէնքն ալ կ'ոչնչացնենք ու երկրին կը տի-  
րենք վերջնականապէս :

Յազկերս — Դիւրին չէ՛ Հայաստանը դիւրին չէ՛ նը-  
ռաւաճել, գարերո՞ւ գործ է, (կը մտմտայ) թո՞ղ զիս մի-  
նակ, ո՞վ զենափետ, գո՞ւն ալ գնա՛, հարցո՞ւր կամքը  
աստուածներուն, յետոյ կը կանչեմ քեզ : (Դենալես ետ-  
և խօսուելով, ձեռքերը երեցնելով, օրինելով կը մեկնի) :

Յազկերս. (մինակ) — Դենալետի՛ մը, քուրմերուն ձեռ-  
քը խաղալի՞ք եմ գարձեր- տե՛ս, հայ իշխա՞ն մըն  
ալ զիտէ, ա՛լ զաղանիք մը չէ, ըսել է թէ՛ հպատակ-  
ներուս մէ՛ջ ալ կը խօսուի, ամէնքն ալ հասկցած են  
թէ՛ Յազկերս գործի՛քն է զենալետին ու անոր քուր-  
մերուն խաղալիքը... . (ինքինի ցուցնելով եւ բուքա-  
մատը կուրծէին դնելով) ե՛ս Յազկերտը, (գանը ցոյց տա-  
լով) այս զահին տէ՛րը. զենալետին խաղալի՞քը... .



## ՊԱՏԿԵՐ Բ.

### ԲԱՆՑ

Վասակ, Վարդան, Ներշապուհ, Նախարարներ

Վասակ.— Կատղած դազան մըն էր կարծես. ու ան ի՞նչ փրփռւր, ի՞նչ յորձունքներ...

Ներշապուհ.— Հապա դենպե՞տը, այն հրէ՞շը :

Վարդան.— Երդումէն մի՛ վախնաք, վա՛ղը կը փոխէ միտքը, Յազկերտի չափ յեզյեզուկ թաղաւոր մը քիչ կը գտնուի :

Վասակ.— Ո՞վ գիտէ. կրնայ ըլլալ որ անմիջապէս զործադրել տան իր հրամա՞նը, այն ատեն մենք ո՞ւր կըմնանք ո՞ւր կը մնայ մեր կամշոտութիւնը. երբ կը պնդէի Արտաշատի ժողովին մէջ որ լո՛ւ մը խորհելէ ետքը ոլատասխանենք. զոնէ այն կծու, անմարսելի վերջաբանը չէր գրուեր, Դեւոնդ երէցի բորբոքած ըղեղին պտո՞ւղը :

Վարդան.— Մի՛ զրպարտեր բացակայ քահանանայ մը, ան իր սրտէն բղխածը խօսեցաւ ու ժողովը զայն ընդունեց :

Վասակ, — Ի՞նչ ընենք ուրեմն, շարունակե՞նք մեր յամառութիւնը (բուլցած վիատած) բայց պիտի կըրնա՞նք :

Ներշապուհ.— Շուտ կը յուսահատիս, Միւնի՛, սպասե՞նք տեսնանք ի՞նչ կը բերէ մեզի վաղուան օրը :

Վարդան.— Վաղուա՞ն սպասել ??? հիմակուընէ՛ պէտք

է հնորդք մը խորհիլ, ժամ' առաջ կացութեան  
գերջ մը զնելու համար, եթէ զեռ տեւէ, մէկ երկու  
ամսուան մէջ հայրենիքը քարու քա՛նդ կ'ըլլայ,  
վասակ. — Ի՞նչ միջոց կայ, զիտէ՞ք բան մը... (պըր-  
սկն ունաձայն մը, դուռը կը զարնեն. ամենին դեպի  
դուռը կը վազեն, բանտապահ մը ներս եը մտնէ):

Զանգակ. (բանտապահի հազուսով) — Այս հազուսիս  
տակ չը կրցա՞ք զիս ճանչնալ, սիրելինե՛ր, ոզչո՞յն  
ձեզ:

Ամենին. (յանկարծակի եկած, ապուտ ապուտ նայելով) —  
Ո՞վ կ'ըլլասս:

Զանգակ. (առ. Սիւնի) — Սիւնեա՞ց իշխան, լա՛ւ նա-  
յեցէք, չէ՞ք ճանչնար, (կը նային ու կը նային) զար-  
մա՞նք, Զանգակ երէցը չե՞մ:

Ամենին. — Զանգակ երէ՞ցս:

Վասակ. — Աւրիի՞ց ուր:

Զանգակ. — Զեր ետեւէն եկայ մինչեւ Տիղըոն:

Վարդան. — Ի՞նչպէս յաջողեցար հոս մտնել:

Զանգակ. — Հիմա' պիտի պատմեմ:

Ներեապուն. — Պատմելու պէտք չկա՛յ. հասկցա՞յ:

Վասակ. — Ի՞նչ հասկցար:

Ներեապուն. — Աւրացա՞ծ է, ուրացա՞ծ. այլապէս չէր  
կընար ներս մտնել:

Զանգակ. — Ի՞նչ ընէի զաւա'կս, հոս Պարսկաստա'ն է,  
ըսնաւորին սուրին տակ ի՞նչ կրնայի ընել. եթէ չու-  
րանայի. զիս պիտի կախէին կամ ցից հանէին. հի-  
մա ողջ եմ, կ'ապրիմ. ու թերեւս ձե՛ր ալ ապրելուն  
միջոց ըլլամ:

Վարդան. — Ի՞նչ ըսել կ'ուզես, չո՛ւտ ըսէ'. այդ բան-

տապանին հսկուստր ի՞նչպէս կրցար ճառել:

Զանգակ. — Կսշա՛րքով, տեսնես, սպարապե՛տ, ի՞նչպէս ընդհանրացած է հոս կաշառակերութիւնը. մեծէն մինչեւ պղտիկը, ուտելո՛ւ վարժուած են, կրծօնտուի՞ր ամենակարո՞ղ ես. այնքա՞ն հզօր է կաշառքին դերը...

Վարդան. — Լա՛ւ, կարելի չէ մեղի ալ ճարել քանի մը ձեռք բանտապանի հագուստ, հանգնինք ու փախչինք, դառնանք հայրենիք:

Զանգակ. — Ատիկա անկարելի է, բայց ուրիշ աւելի դիւրին ու գործնական միջոց մը կայ:

Ներւապուն. (խորհրդաւոր ակնարկով մը) — Այդ միջոցը քեզի պահէ՛, դիտե՛մ, զիտեմ:

Զանգակ. — Խոտելի միջոց մը չէ՛ սակայն. արդէն ուրիշ միջոց չկայ, վաղը. արշալոյսին ձեռնակապերով պիտի աքսուիք պիտի տարուիք ո՞վ զիտէ ո՛ւր ա՛յս է Յազկերտին հրամանը:

Վարդան. — Մեր ներկայութեան ըրաւ երդումը. «Սադաստան պիտի աքսորեմ» կը մոլտալ Գաղանը:

Վասակ. — Ի՞նչ, կը ծաղրէ՞ք, չի՞ կրնար գործադրելինչ որ հրամայեց:

Վարդան. — Անտարակո՞յս, բայց չեմ կարծեր թէ այդ հրամանը նոյնը մնայ, Յազկերտ կ'ըսեն անոր, վայրկեան մը յետոյ կը տեսնես որ փոխուած է, դուն Դենապիտը կը տեսնե՞ս, դենպե՞տը, ան գեհենցո՞ւն, դժոխքին կո՞ճղը... ա՛յս, ան կը տեսնե՞ս, անո՞ր ձեռքն է ամէն բան:

Զանգակ. — Ուրեմն ես երթամ, կ'երեւի թէ ինձի պէտք չպիտի ունենաք, ինքզինքնիդ առահով կը կար-

ծէք. բայց կը սխալիք չարաչար. այսոչա'փ ըստ որ  
առեն չկայ. եթէ ա'յսօր, ա'յս պահուս վճռական միշ-  
ջոցի մը չը դիմէք, կորառու՞ծ էք:

Վասակ. — Ըսէ՛ նայինք, ի՞նչ միջոց կայ:

Զանգակ. — Երեսանց ուրանալ, խոստումներով Յաղ-  
կերտին աչքը փոչի ցանել, պարզեւներով լիանալ,  
առօք փառօք հայրենիք վերադառնալ. ահա՛ միջոցը:  
Վարդան. (կիրքով) — Ի՞նչ կ'ըսէք, երէ՛ց, ի՞նչ կ'ըսէք,  
երբ ու համբաւը Հայաստան հասնի, ժողովուրդին  
ձեռքէն ի՞նչպէս ազատինք:

Ներշապուհ. — Դեռնդ երէ՛ցը մանաւանդ, հաւատա-  
ցէ՛ք, բահերով, բիրերով վոնտել կուտայ մեղ:

Վասակ. — Բա՛ն մըն ալ չե՛ն ըներ, նոյնիսկ կ'արդա-  
րացնեն ալ:

Ներշապուհ. — Շա՛տ լաւատես կը տեսնեմ քեզ, Սիւ-  
նի՛:

Վասակ. — Մեր ժողովուրդը լաւ կը ճանչնամ եա.  
զտահ եմ թէ՝ ո՛չ ոք պիտի մեղադրէ մեղ, եթէ այս  
միջոցին դիմենք:

Ներշապուհ. — Եթէ այդպէս է, ընտրե՛նք ուրեմն Տէր  
Զանդակի ցոյց տուած միջոցը, շուտով վերջ մը դնենք  
այս կացութեան:

Վարդան. — Բայց խի՞ղճը. բայց հանրային դատաս-  
տա՞նը. բայց պատմութի՞ւնը, ո՞ւր պիտի փախչինք  
մենք այս երեքին դատապարտութենէ՞ն...

Վասակ. — Ներկան, ներկա՞ն խորհինք, ապագային  
դատաստանը՝ վերջի խնդիր է. հիմակուա՞նը նայինք:  
Զանգակ. (արտուրալով) — Շուտ ըրէ՛ք, կաղոչեմ, ժա-  
մանակը կ'անցնի պէտք է մեկնիմ, կ'ըսպասեն ինձի:

Վարդան. — Որո՞նք կ'ըսպասեն :

Զանգակ. — Հիմա չեմ կրնար ըսել, զաղտնիք պէտք է մնայ :

Վառակ. — Հոդ չէ', զարձեալ զաղտնիք թո՛ղ մնայ :

Ներշապուհ. — Դենպէ՞տը կ'ըսպասէ :

Զանգակ. (ծափելով) — Ե՛ս, անո՛ր պէս մէկը, ի՞նչ որ է, ան երկրորդակա՞ն է, բուն խնդիրը նայի՞նք մենք :

Վարդան. — Ի՞նչ կ'ըսես, Սիւնեաց իշխա՞ն.

Վառակ. (կմկմալով) — Ե՛ս, եթէ ինձի հարցընէք, համամի՞տ եմ Տէր Զանգակի, որովհետեւ ատկէ դուռ,

ուրիշ միջոց մը չեմ գիտեր :

Ներշապուհ. — Ի՞նչ կրնանք ուրեմն, կա՞յ ուրիշ միջոց մը, անո՛ր ոյիմենք :

Զանգակ. (աւելի արտօրալով) — Ես կը մեկնիմ. ի՞նչ պատասխան տանիմ հոն :

Ամենիք. (բացի Վարդանին) Կ'ուրանա՞նք, կուրանա՞նք...


Վարդան. — Պայմանաւ որ մեր երկիրը վերադառնանք անյապաղ :

Զանգակ. (զոհ ես զուարք) — Անշո՛ւշտ, անշո՛ւշտ, շա՛տ լաւ, միա՛յք խաղաղութեամբ (կը մեկնի զբերէ վագելով) :

Վարդան. (բանտին երկայնիք պարտելով) — Ուրանա՞լ հա՞ : ի՞նչ ահոելի վայրկեան, ո՞ր բերանը պիտի կրնայ բացուիլ, ո՞ր լեզուն է ան որ պիտի արտասանէ պիղծ անուններ դեւերու, կուռքերու, որ ճունկերը պիտի ծոին երկրպագելու կրակին, Աստուած իմ, ան ի՞նչ ահաւոր վայրկեան է... (յանկարծ այլափոխուած) բայց, ի՞նչ օգուտ հայրենիքը... .

Բարիտապան մը . (բանին մէջ կը մտնէ կանչելով նախարարները) — Աղուտ էք , եկէ՛ք եկէ՛ք , Արքայից արքայի՛ն քով , (նախարարները կարգով դուրս կ'ելլեն) :

## ՊԱՏԿԵՐ Գ.



(Յազկերտի պալատը , մէկ անկիւնը Աւրուեան մը , կուռներ , Յազկերտ զանին վրայ բազմած , Դենապետը ըգդպեսուերուած , ներս կը մտնէ , ետեւէն բուրմերը , ՀԱՅ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ , կիսաբոլորակ մը կազմած , կը խոնարհին արշայական զանոյին առջեւ) :

Դենապետ . (ոսկի բուրվար մը ձեռքը խնկարկելով Աւրուեանի կրակին ու երգելով) :

Անժա՞ն : Արեւ , ժպտէ՛ վերէն ,  
Արախոացէ՛ք , աղդ համօրէն  
Երկինք Երկիր կեա՞նք ըստանան  
Դիշեր ցերեկ թո՞ղ քեզ փառք տան :

Բուրմեր . — (երգելով)

Խնդա՞ն Որմի՛զդ , կեցցե՛ս Յազկե՛րա ,  
Կեցցէ՛ Տիզրոն , վե՛հ դաստակերա :

Դենապետ . (երգելով)

Ահա՞ , ահա՞ , խաւարամած  
Արեւմուտքէն լոյսը ցոլաց ,  
Մութը նստող հողիներուն՝  
Փա՛ռքը ծագեց Միհր-Արեւուն :

Բուրմերը . (երգելով)

Խնդա՞ն , Որմի՛զդ , կեցցես Յազկե՛րա ,  
Կեցցէ՛ Տիզրոն , վե՛հ դաստակերա :

Դենպես. — Օրհնեա՛լ ըլլան երկինք, փառաւորուէ՛ Ա-  
րեւ, Արարիչ կենաց, Աղբիւր լուսոյ և ջերմութեան,  
փայլէ՛, զուարթացի՛ր, ահա՛ քեզի նորբնծայ երկըր-  
պագուներ ծնկագուճ զքեղ կ'ընդունին Աստուած Աստ-  
ուածոց (նախարարներուն ուղղելով) ծունկի՛ եկէ՛ք,  
ծունկի՛, երկրպագեցէ՛ք սրբազն կրակի՛ն . . . .


Քուրմերը. (Երգելով)

Խնդա՛, Որմի՛զզ, կեցցե՛ս, Յազկերտ,  
կեցցէ՛ Տրզրոն, վեհ դաստակերտ :

Յազկերտ. (Կը դիմէ Տեսարանը զանին վրայեն, Հայ նա-  
խարարները ծունկի եկած, միայն Վարդան քիչ մը  
ծունկը ծռած, զգուշութեամբ կուրծին խաչ մը կը նա-  
նէ, վրայն կը նայի խանդաղատանիով մը ու. կը մըր-  
մբնջէ) .

Վարդան. — Մեղա՛յ, մեղա՛յ, մեղա՛յ . . .

## (ՎԱՐԱԳՈՅՐԸ ԿԻԶՆԷ)



### ԱՐԱՐ Գ.



(Սինեաց Վասակ իշխանին պալատը)

### ՏԵՍԱՐԱՆ Զ.



Վասակ. (մինակ) Առէ, ազատեցա՞նք վերջապէս, մէկ  
կողմէ՛ Յազկերտին սաստը, միւս կողմէ՛ դենապետին  
սառեցնող հեզնա՞նքը . մէկ կողմէ՛ Ներշապուհի որո-  
տը, միւս կողմէ՛ Վարդանի պոռո՞տը, ո՞ր մէկը, ո՞ւհ . .

ան ի՞նչ վայրկեան էր, ի՞նչ վայրկեան... Խնդիր է հիմա տեղաւորել այդ կրակի պաշտօնեանե՞րը, այդ աղան, անկույտ, այդ քանասա՞ր գայլերուն զանել զիրունի ոչխարներ, որ ուտեն ժողովուրդը հոտ, կը-զերը՝ գայլ, ահա' մարդկութիւնը... Երկրիս ո՛ր կողմբն ալ երթաս, նո՞յն է կղերը. տղէտ, ռամիկ, երկ-չոտ հօտին կեղեքի՞չը. Իսկ մեր կղերնե՞րը... Օ՛, անհամեմատ առաւելութիւններ ունին անոնք՝ քուրմերուն վրայ, իրենք բնիկ՝ բնիկներուն տկար երակ-ները լա՛ւ զննած են, կը հագնին սեւը, կ'ըլլան սեւ բաւրզով, կակու զ մորթով զառնուեկներ՝ արտաքինով, իսկ ներքինով՝ արիւնկղակ գայլեր, յափշտակելու, յօ-շուտելու, լափիելու արուեստը կատ որելագործած... քուրմերը զոնէ տղէտնե՞րն են երկրին ու օտարները: Աս- զին Դեւոնգ երէ՛ց մը կայ. ան հերի՞ք է Քրիստոնէ- ութեան խմբը Ե՞ն... ինձի ի՞նչ փոյթ Յազկերտի խոստումը կը բաւէ՛, Հայաստանի տպագայ թագա- ւորութեան օրինաւոր ժառանգը՝ Սիւնեաց իշխանն է: Ա՛յս, ի՞նչ կ'ըլլար, եթէ մէկ քանի ծանրադլուխ ու հեռատես նախարարներուն պէս՝ Մամիկոնեանն ալ հետեւէր իմ ուղղութեանս: Բայց ինչու՞ շուարիմ, չէ՞ որ Յազկերտ լիազօր իշխանութիւն տուաւ ինձի: Թագագրութեանս հանդէսին օ՞ըը պիտի ըլլայ այն օրը՝ Հայաստանի վերածնունդին արեւը պիտի ծագի. (խելացնոր, յափշտակուած) Թա՛զս, ահա' թագս. ահա' մարդարիտներով ու աղամանդներով յեռուած թագս. ահա' արքայական ծիրանիս. (աչերը խուոր մը բա- ցած, ձեռները կ'երկնցնէ օդին մեջ բան մը բռնելու ձեւով) Այս', ե՛ս, Սիւնեաց իշխան, Հայաստանի թա-

դաւոր... և դրախտը պիտի նորողուի, որովհետեւ  
այն օրը՝ կղերները մաքրուած պիտի ըլլան երկրիս  
երեսէն... կղերնե՛րը մարդկութեան փորձանքնե՛րը,  
ժողովուրդին տղրուկնե՛րը... (դարձեալ ոսքի կ'ելլէ,  
յետոյ ժիշ մը ճանդարտած, կը նստի, նոյն միջոցին դու-  
ռը կը զարնեն կը ցատկէ տեղեն դեպի դուռը կը դի-  
մէ) Ո՞վ է նայինք:

(Զանգակ երեց ներս կը մտնէ)

### ՏԵՍԱՐԱՆ Բ.

Վասակ, Զանգակ

Զանգակ. — Ողջո՞յն, մե՛ծ իշխան Սիսական:

Վասակ. — Օրհնեա՛ Տէ՛ր:

Զանգակ. — Իշխա՞ն մեծ, զիտէ՞ք ի՞նչո՞ւ տարածամ կը  
բախէմ ձեր բարձրութեան պայտատին դուռը:

Վասակ. — Ի՞նչ կայ որ բարի՞ է:

Զանգակ. — Բա՞րի՞... այսուհետեւ բարիք յուսալ բա-  
ցարձակ յիմարութիւն է, երկրի մը մէջ, ուր Դե-  
ւոնդ քահանային պէս կապելու խենդեր, Մամիկոն-  
եանի պէս ալ՝ չոր զլուխ ապստամբներ կապրին:

Վասակ. — Շո՞ւտ, պատմէ՛ ի՞նչ նոր բան պատահե-  
ցաւ որ...

Զանգակ. — Ի՞ի պիտի ըլլար, առսկալի ջա՞րդ մը...

Վասակ. (սարսափանար) Ո՞ւր, ի՞նչպիսի ջարդ.

Զանգակ. — Անգեղ զիւղի եկեղեցին, պատարագի մ-  
տեն:

Վասակ. — (այլայլած) Ի՞նչ կ'ըսես, ո՞ր եկաղեցին:

Զանգակ. — Դեւոնդ քահանան կը պատարագէր, մոզ-  
պետը փորձեց իր քուրմերուն հետ եկեղեցին մանել  
ու անկիւն մը կրակը վառել:

Վասով. — Ե՛ւ, յետո՞յ,

Զանգակ. — Ժողովրդը մոլոց, զլուխները տաք-  
ցան, ձայները հետզհետէ բարձրացան, պատարագիչը  
խորանէն ետ դարձաւ, նայեցաւ, քահանաներն ու  
անբոխը՝ մողերուն վրայ յարձակեցան, ժամերդու-  
թիւնը լոեց, խուռն անբոխին մէջ ըիրեր կը խազզը-  
նէին. արիւն տեսայ, գաւիթը կը վազէր, հաղիւ-  
հանեցի զգեստու, փիլռն, փոկեղ աւանդատունը նե-  
տեցի, փախայ, հո՛ս վազեցի եղելութիւնը հաղորդե-  
լու:

Վասով. (Տխուր ու մտածկոս) — Մողոկ'ոը ո՞ւր մեաց,  
քու բմերէն շատ մարդ ջարգուեց ո՞ւ:

Զանգակ. — Ի՞նչ կ'ըսէ՛ք, մե՛ծ իշխան, վախճանը չէ՛մ  
զիտեր, սա՛չափը զիտեմ որ ամբողջ երկիրը կը տա-  
տանի ծովի մը պէս.

Վասակ. (Մատը բերնին տանելով) — Աս ի՞նչ ծանրակչիո  
զէպքէ, զիտե՞ս, երէ՛ց, հետեւա՞նքը, ո՞վ պիտի կրէ  
եթէ ո՛չ, ե՛ս, ե՛ս, որ, ինչպէս զիտես, երկու մա-  
տադ որդիներս հո՛ն, Տիզրո՛ն ձգեցի պատանդ. երաշ-  
խաւորելու համար յաղաղութեան վերահաստատուի-  
լը, մողերուն հոս տեղաւորուիլը. (Երկու ձեռներով  
ծածկելով երեսները, լալազին ձայնով մը) Վա՛խ, զա-  
ւակնե՛րս, Բարեկէ՛ն, Բակո՛ւր, ձեր անմեղ արի՛ւնը..

Զանգակ. — Տէ՛ր իշխան ի՞նչ ընելու է:

Վասակ. — Ինծի՞ կը հարցնես, երէ՛ց, ա՞խ, ի՞նչ ըսեմ  
ձեր զասակարդին, մէ՛կ անդամ չունիք, որուն վրայ  
կարենայ մարդ վստահիլ ու հաւատք դնել:

Զանգակ. — Ե՞րբ, ի՞նչ բան վստահեցաք ինծի ու  
խարուեցաք, կ'աղաչեմ, իշխանդ իմ, ամէն կզեր  
նոյնը չըլլար, կա՛ն որ շահամո՛լ են ու կեղծաւոր,

ինչպէս է Ղեւոնդ. կա՞ն ալ որ անձնուրաց են ու ան-  
կեղծ,

Վասակ. (հեզնելով) ինչպէս որ դուք, այնպէս չէ՞։  
Զանգակ. . . (ժպտելով) Մե՛ծ իշխան, զիս երախտապարտ  
կ'ընէք, չափողանց պատուելով։

Վասակ. — Երախտապարտ րիլալէդ ի՞նչ օդուտ, կրնա՞ս  
զի՞ս երախտապարտ ընել քեզ։

Զանգակ. — Ի՞նչպէս։

Վասակ. — Հաւատարմօրէն ծառայելով։

Զանգակ. — Մինչեւ ցմահ, պատրա՞ստ եմ ձեզ ծառա-  
յելու։

Վասակ. — Լա՛ւ ուրեմն. քեզի երդում ընել առա-  
ջարկել աւելո՞րդ է, արդէն քանի՛ քանի պարագանե-  
րու մէջ վարժուած ես երդում ընելու միայն սմ' կը  
յիշեցնեմ որ՝ եթէ զլուխ հանես ինչ որ հիմա քեզի  
պիտի առաջարկեմ, այքս լաւ նայէ՛, թագաւորու-  
թեանս բոլոր բարիքները պիտի վայելես, եթէ այս  
տսգնապն ալ անցնենք։

Զանգակ. Տէ՛ր իշխան, ուրիշ բան չե՛մ ուզեր, բայց  
միայն ողջութիւնդ ու երկրիդ խաղաղութիւնը։

Վասակ. — Դիտե՞ս ի՞նչ պիտի ընես, հիմա'։

Զանգակ. — Տէ՛ր իմ։

Վասակ. — (ըուրջը նայելով, լրջօրեն, մատը երբունիին  
տանելով) Այս պատերն անդամ ականջ ունին, զգո՞յշ,  
զգո՞յշ . . .

Զանգակ. — Մի՛ ճաթեցնէք, Տէ՛ր իմ իշխան, չուտ  
ըսէ՞ք։

Վասակ. — Ըսելիքս երկու բառ է. — Վարդան ու Ղե-  
ւոնդ. — երկու յատուկ անուններ, հասարակաց դար-  
ձած. առ երկու անունները կրնա՞մ վերցնել երկ-

րիս երեսէն :

Զանգակ .— Ե՞նչպէս վերցնել , բաել կ'ուղեք , ջնջե՞լ .  
Վասակ .— Չը հասկցա՞ր , ատկէ աւելի պարզ կը խօսւի՞ :  
Զանգակ .— Հասկցայ , հասկցայ , (զլուխը կ'եւեցնէ)   
այս երկու ճիւաղներէն Հայտստանը փրկել չէ՞ք . ու  
զեր ըսել :

Վասակ .— Այս՝ , այս՝ , բայց պիտի կրնա՞ս ,

Զանգակ .— Առկէ դիւրիւն . . (կը խորհի) բայց ատկէ  
ալ դժուար ի՞նչ կայ :

Վասակ .— Առ եղա՞ւ հիմա , ի՞նչ ըսել կ'ուղես .

Զանգակ .— Բաել կ'ուղեմ թէ՝ ի՞նչ որ մարդոց համար  
դժուար է , Զանգակին համար դիւրին է :

Վասակ .— Բայց պիտի չուշանա՞յ :

Զանգակ .— Ե՞րբ կ'ուղես որ ըլլայ ,

Վասակ .— Այսօրուընէ մինչեւ վաղը , առոտուն կա-  
նուի , կէսօրուան մնայ՝ չըլլա՞ր , իրիկունը՝ ընա՞ւ  
չըլլար :

Զանգակ .— Ոնրեմն ա՞յս դիշեր ընելու է . ա՞յս դի-  
շեր :

Վասակ .— Ա՛ւ չեմ դիտեր ես , քու դիտնալիք բա՞նդ է :

Զանգակ .— Եմ դիտնալի՞քս . . . ա՞յս , եթէ ձեռքէս  
դայ , վայրկենաբար կ'անհետացնեմ , երկու քն ալ ան-  
դէ՞նը կը ճամբեմ . . .

Վասակ .— Գնա՞ չուտով , խորհէ՞ , ճարը փնտռէ՞ , զը-  
տի՞ր , վերջացո՞ւր :

Զանգակ .— (խոնարհելով) Մնա՞յք խաղաղութեամբ  
Տէ՞ր իշխան (կը մեկնի) :

Վասակ .— (մինակ) Եթէ կրնա՞յ . . . ի՞նչ հրաշալի  
դիւտ . . . բայց չեմ հաւտար որ դիւրին դիւրին զը-  
լուի կրնայ հանել , Դեւոնդը , երկո՞ւքն ալ անդէն ,

զրկել . հրա՛չք կ'ըլլայ . ու այդ հրաշքը կատարողը՝  
հրաշագործ սուրբ մը : (Դուրսէն աղմուկ մը , ոտի ձայ-  
ներ կը լսուին , երկու մարդիկ պատգարակ մը կը բերեն  
դահինին միջավայրը կ'իջեցնեն , կը դնեն .)

### ՏԵՍԱՐԱՆ Դ.

Վասակ , Մոգակ , Երկու Ոստիկաններ .

Վասակ . — Աս ի՞նչ է , ո՞վ կը բերէք .

Ոստիկաններ — Մոգակ տը . (դուրս կ'ելլին)

Վասակ . — (Երկու ձեռքերուն մեջ զլուխն առած) Ասու-  
ուած իմ , ի՞նչ կը տեսնեմ :

Մոգակ . — (զլուխը սուր զտակով փարթուած՝ դուրս հա-  
նելով պատգարակին մեջին , լալկան ձայնով մը) Կը տես-  
նեմ միճակս :

Վասակ . — (զլուխուրանենով մօտենալով) Թողութիւն ,  
բիւր թողութիւն , մեծ մոգակտ , ի՞նչ դժբախտու-  
թիւն է :

Մոգակ . — Դժբախտութիւն չէ' , դա՛ւ է , դա՛ւ , (զլ-  
ուխը վեր բարձրածնելով ու կիրքով) Դաւաճա՞ն , զիս  
յատկապէս Հայաստան բերիր որ զլուխս ուտես , ու  
իմ սիրական մողերս սպաննել տաս , հա՞...

Վասակ . — Ի՞նչ կ'ըսէք , հա՛ր մոգակտ . ի՞նչ կ'ըսէք .  
Միթէ ես գիտէի՞ , կրնայի՞ զիտնալ . կամ կ'ուղէի՞ որ-  
այս աղէտը պատահէր . մանաւանդ ո՞րքան կը ցաւիմ  
(կը քաջուի)

Մոգակ . — Շնորհակա՞լ եմ , վայրենի քահանաներուդ  
ձե՛ռքը մատնեցիր (կ'սկսի բարձրածայն լալ) քուրմերս  
ջարդեցին , զիս վիրաւորեցի՞ն , տե՛ս , տե՛ս (զլուխը  
ցոլց ելուտայ) քանի՛ քանի վէրքեր բացին դիսուս վը-  
րայ , ա՞ն , զլո՞ւխս . . .

Վասակ. — Կարեկցու շետով յը) Ան ո՞ր աղիրատը  
յանդգնեցաւ . . .

Մոզպես. — Ինձի՞ կը հարցնես, չ՞ս դիտեր.

Վասակ. Կ'ազմչե՛մ, բաէ՛ք, ո՞ր աղիրատը :

Մոզպես. — Դեւսնզը, Դեւսնզը . . .

Վասակ. — Զիրցա՞ք գետին փռել այդ անօրէնը.

Մոզպես. — Ա՞վ պիտի փռեր, մե՞նք (լանկարծ դեմքը  
փոխած սպառնալից) բայց տյոպէ՛ս չըլլար, պէ՛տք է  
որ դրեմ Դուռը, պատմեմ եղելութիւնը՝ հրաժարեցա՛յ  
այս պաշտօնէս, իմ տեղուուրիչնե՞ր թող դան,  
որոնց զլուխը դեռ չէ կերեր հարուածը, ես կերայ,  
կերածս կը բաւէ, քիչ մըն ալ ուրիշնե՞ր թող ճաշա.  
Գեն առայելութեան պատուզնե՞րը . . .

Վասակ. — Կ'անցնի՛, կ'անցնի, հա՛յր մոզպետ, ա՛յս  
ա, կ'անցնի :


Մոզպես. — Ա՛չ, ո՛չ, պէտք է մանրամասնօրէն տեղեւ.  
Կազրեմ այս բարբարոսութիւննե՞րը, Արքայից տր.  
քային պէտք է զրեմ յատուկ նամակով մը :

Վասակ. — (առանձին, ցած ձայնով) Այն առեն արե՛ւը  
պիտի խաւ արի մատագ զաւակներուս, (բարձրաձայն)՝  
Բան մը մի՞ զրէք, ե՛ս, ե՛ս տնձամբ պիտի լուծեմ  
զրէքը, լա՛ւ զիացէ՞ք :

Մոզպես. — Ա՛ւր էր թէ . . . (ալ չկրնար շարունակել,  
ունչը կը բռնուի, կը սկսի զետ զետ հազալ) :

Վասակ. — Քիչ մը հանգչէ՛ք, հա՛յր մոզպետ : (դրսէն  
ունաձայն, ներս կը մտնեն Դեւոնդ Երեցը, ետեւեն Վար-  
դան Մամիկոնեանը) :

ՑԵՍԱՐԱՆ Դ.



Նախորդներ, Դեւոնդ Երեց, Վարդան

Դեւոնդ... Աղջո՞յն, Սիւնեաց ի՛սա՞ն,

Վարդան. — Բարե՛ւ Սիւնի:

Վասակ, (քի՞չ տակէն) — Օրհնե՛ա Տէր, բարի եկաք:  
(Դեւոնդ ու Վարդան կ'առաջանան, յանկարծ կը տես-  
նեն անկիւնը կծկած մոզպետը, որ զլուխը տնկած՝ խո-  
ժոռ խոժոռ կը նայի),

Դեւոնդ. (արևամարհոս հմձիծաղով մը) — Աս հոս ի՞նչ  
գործ ունի:

Վարդան. — Դեռ ո՞ղջ է մնացեր:

Մոզպետ. — Ի՞նչ, կ'ուզէիք որ մեռնէի:

Վասակ. — Թա՛ւ լիցի, հա՛յր մոզպնա:

Դեւոնդ. (հեզինելով) Հայր մոզպետը կրակահար եղած  
ըլլալու է որ շատ հեռու քաշուած է:

Մոզպետ. — Կը զարմանա՛մ, երէ՛ց, ձեր վրայ:

Դեւոնդ. — Ի՞նչու կը զարմանաք:

Մոզպետ. — Թէ ի՞նչպէս քահանայ եղած էք:

Դեւոնդ. — Ինչէ՞ն:

Մոզպետ. — Եթէ քահանայ չըլլայիք, անոդատնառ հը-  
րոսախմբի մը պետը պիտի ըլլայիք:

Դեւոնդ. — Եթէ հարկ ըլլայ, ինչո՞ւ չըլլանք, մեր  
պաշտօնը չէ՞ պաշտպանել մեր հօտը՝ օտարամուտ դայ-  
լերէ:

Մոզպետ. — Բիրերո՞վ:

Դեւոնդ. — Աղեղո՞վ ալ, նետո՞վ ալ, սուրո՞վ ալ, կը  
պաշտպանենք. Եթէ հարկ ըլլայ:

Մոզպետ. (Վասակին նայելով, բարկութեամբ) — Կը դի-

աէ՞ք, Արևեաց իշխան, ո՞րչափ զո՞ն է :

Վասակ. — Կատա՞կ կ'ընէ, հա՞յր մողպեա:

Մողպես — Կատա՞կ .. Բիրերու հարուածներով կատակ կ'ըլլայ, Հայաստանի մէջ զործագրով կատակը ո՞յս է :

Վարդան. — Եթէ կատակը չէ՛, իրականութիւն թո՞ղ ըլլայ. ի՞նչ կ'ըլլայ. (ներկինք բորբոխած) Մողպե՛տ, ասդին նայէ՛, ահա՞ կ'ազգարարնե՞ւ քեզի. Եթէ այս որուընէ, մնացած քուրմերդ ալ հետդ, Տիգրոնի ճամբան չի բռնես, զիտցա՞ծ ըլլաս որ այս զլխուդ վերքերը շա՞տ սլիտի փնտուես, ա՛լ չեն վիրաւորեր քեզ, անհո՞գ եղիր, մէ՞կ անզամով հաշիւդ կը փակեն :

Վասակ. — Այսողէ՞ս խոռացանք Արքայից Արքային :

Վարդան. — Արքայից Արքան՝ մեղ ձերքակալելու, բանտարկելու, մեր հաւատքը բռնի ուրանալ տալո՞ւ համար կանչեց Տիգրոն, հէ՞, ըսէ՞ք նայիմ (աչերեն կրակ ցայտելով) մոոցա՞ք այս ամէնը :

Վեւնիդ. — Յատկապէս եկած ենք հոս վերջնականու. պէս ազգարարերու որ փութաս երկրէն հեռացնել այս պատուհասնե՞րը, եթէ ո՛չ, դո՛ւն զիտես, ահա՞ կ'ըսեմ, ժողովուրդին հետը խազալ չըլլա՞ր ...

Մողպես. — (զլուխը շարժելով զայրոյթով) Ի՞նչ ըսէ, կ'ու զեն :

Վեւնիդ. — Լուէ՛, լուէ՛, ըսել կ'ուզինք, շո՞ւտ Տիգրոնի ճամբան բռնէ՛, մողպետ, հոն զնա առատ առատ կը բակ վառէ՛, Միհրիդ փա՛ռքը նուազէ, հոս ատանկ փորձերը փորձանքի կը հանդիպին, կ'երթաս, հոս առածածներդ ու կրածներդ կէտ առ կէտ կը պատմես:

Մոգպես. — Սիւնեա'ց իշխան, ալ հոս կենալու ժամանակ չունիմ, ո՞չ ալ համբերութիւն. ժամ'մ տուաջիս ճամբայ դնելու նայէ՛ :

Վասակ. — Տե՛ղ չպիտի երթաս, պալատիս մէջ պիտի նստիս, ուտես, խմե՛ս, հրամայե՛ս :

Վարդան. — (Վասանին) Միայն քեղի՛ ստեղայն, պալատէդ դուրս հրամայել՝ կը նշանակէ մարմաջը ունենալ բիրի հարուացներո՛ւ... Շատ աղէկ, հո՛ս թող մնայ, կըսես, ի՞նչ պիտի ընէ :

Մոգպես. — Ի՞նչ պիտի ընեմ. Միհր-Աստուծոյս քարողչութեամբը պիտի պարսպիմ:

Ղեւննդ. — Այս՛, կրնաս ու զածիդ չափ պարապիլ ամէն տեղ. բայց ո՞չ հոս, ու ը ճշմարիտ, այսինքն ձեր պաշտած Միհրը ստեղծող Աստուծոյ երկրպագուներ միայն կը զտնուին :

Մոգպես. — Միհրը բերաննիդ առնելու մարդ է՛ք դուք :

Ղեւննդ. — Ի՞նչ կայ որ, Միհր բսածդ՝ մեր ամէն օրուան ծագող ու մարող արեւը չէ՞...

Վասակ. — Ճէ՛ր հայր, շատ կը չափազանցէ՛ք :

Մոգպես. — Սիւնեա'ց իշխան, դահլիճիդ օդը զիս կը նեղէ՛, շուտո՞վ, շուտո՞վ, առանձնանալ կ'ուղեմ...

Վասակ. — (ծոելով) Կը հանգչի՞ք :

Ղեւննդ. — (Վարդանին) Հօրեղբայրն է, հօրեղբայրը...

Վասակ. — Ծաղրեցէ՛ք, ծաղրեցէ՛ք, վերջը կը տեսնենք. (դրան առջեւ կ'երբայ կը կանչէ) եկէ՛ք, եկէ՛ք հայր մողպետը փոխադրեցէ՛ք հանգստարանը. թողքիչ շունչ առնէ, քնանայ... (Երկու ոստիկաններ կուգան պատզարակը կը վերցնեն, դանիլինը մնան Վասակ Վարդան ու Ղեւննդ, Վասուկ մամտուեով, նակտին քր-

տինել սրբելով) .— Ե՛, հիմա՞ խօսեցէ՞ք նայինք, ի՞նչ  
է մտքերնիդ :

Վարդան .— Բա՞ն մը չունինք խօսելու, նոր բան չէ՞  
այս, երբ Յազկերտի սպառնալիքներէն, պարսկա-  
տանի մէջ ստիպուեցանք ուրանա՞լ, ո՞վ սեւ ժամ,  
կարծեմ թէ երեսա՞նց էր. մինչդեռ հիմա կը տեսնեմ  
որ հոգիո՞վ մարմինո՞վ փարած ես մողագութին ու քուր-  
մերուն :

Վասակ .— Դուք այնպէս զիտցէ՞ք, Վասակ մատնի՞չ  
է, ազգուրա՞ց է կարծեցէ՞ք հոգ չէ՞, վազը, տեսնենք  
հետեւանքը ո՞վ կը կը կը ... կը ցաւիմ, Մամիկոնեա՞ն.  
որ դուն, հայրենիքը, եկեղեցի՞ն կը քանդես քու այդ  
խելքո՞վդ :

Վարդան .— Ե՞ս կը քանդեմ Սիւնի՛, ե՞ս թէ դուն:

Դեւնիդ .— Եկեղեցին չի՞ քանդուիր, ո՞չ Վասակի դա-  
ւերով, ո՞չ ալ Յազկերտի բանակներով :

Վասակ .— Բայց կը քանդուի լոկ մէ՞կ Դեւսնդիանո-  
սով :

Դեւնիպ .— (ԱՐՏՈՒՐԻՆ) Ի՞նչ ըսել կ'ուղես, ի՞նչ ընէի,  
յանձնէի՞ եկեղեցին, թոյլ տայի՞ որ կրակի պաշտա-  
մունքը կատարէին:

Վարդան .— Ժողովուրդը թոյլ կուտա՞ր :

Դեւնիդ .— Ի՞նչ օգուտ, մողակաց ստիպելու էր :

Վասակ .— Տէ՛ր հայր, այդ ճամբան անդունդը կը  
տանի :

Վարդան .— Խնդրեմ, ըսէ՛ մեղի, ո՞ր ճամբան կը տա-  
նի դէպի կեա՞նք. ուրանա՞լը, ուրանա՞լը :

Վասակ .— (նետքինետ խորհրդառու ու լուրջ դեմքով մը)  
Գիտի ստիպուիմ մերկապարանոց ընել ամէն բան,  
հոս, մարդ չկայ, կը խնդրեմ որ չը բռնկիք, որովհե-

տեւ ահաւոր յայտնութիւներու տովեւ սլիտի դնեմ  
դձեգ:

Ղեւոնդ. — (հեզնոս) Առ ի՞նչ յայտնութիւններ են  
արդեօք:

Վարդան. — Բնական է թէ՝ սովորական յայտնու-  
թիւններ չե՞ն.

Վասակ. — Ո՞չ ալ անսովոր, իրականութիւն են տեղեն  
կ'ելլէ բան մը փեռողի մը ձեւով, մեկ երկու անգամ որո-  
ջան կ'ընէ որահին մեջ, որմերուն առջեւ կեզած՝ կը նա-  
յի, կանգ կ'առնէ առձանի մը առձեւ, յետոյ Ղեւոնդին  
ու Վարդանին ուղղելով) Հո՛ս հել՛ք, հո՛ս (Ղեւոնդ ու  
Վարդան դեպի հոն կը դիմեն) Նայեցէ՛ք, յա՛ւ նայե-  
ցէ՛ք մանաւանդ դո՛ւն, Մամիկոնեա՛ն, ո՞վ է այդ  
վեհափա՛ռ:

Ղեւոնդ. — Ես բա՛ռ մը չեմ հասկնար այդ խօսքերէդ ։  
Վասակ. Հիմա՛ կը հասկնաք. քիչ մը համբերեցէ՛ք  
միայն։

Վարդան. — Բայց Սիւնի՛, չըլւա՛յ թէ մողպետին վէր-  
քը քու ըղեղիգ ազգած բլլայ. վէրքը, մողպետին զը-  
յուխը, բռնկողը՝ քո՛ւ ըղեղդ։

Ղեւոնդ. — (Վասակին ուղղելով) Զարդ ողները՝ մողե-  
րը. կատղողը՝ դուն։

Վասակ. — Ո՞վ կ'ուզէիք որ բլլար, ինէ զատ։

Վարդան. — Բայց ինչո՞ւ...

Վասակ. — (Երկու ժին Դուք հո՛ս նայեցէ՛ք (ցոյց տալով  
առձանիր) նայեցա՞ք, ո՞վ է, ճանչցա՞ք։

Վարդան ու Ղեւոնդ. — Է՛ ի՞նչ սլիտի ընենք, սեպէ  
թէ ճանչցանք։

Վասակ. — (առձանին առջեւ ծերադիր, պալատաբին)  
Դո՞ւն, վեհափա՛ռ ու բուական իմ նախահօրս, դո՞ւն  
որ դողացուցիր Տարօ՞նը, վրդովեցիր անդրդուելի

Տրդա՞մը, ապստամբեցուցիր Այր լեռը, Ողիան ամբոցը քաշուած, ա՛ն ու մահ սփոնցիր չորս զիգ, զուն, Աղուկ, Հայկազուն նահապեա... .

Վարդան. — (զած ձայնով) Աղուկ, օտար չէ ականջիս այդ անունը;

Վասակ. — (Եարունակելով. յափետակուած) Այդ քունայուածքի՛զ մէջ կը կարգուած ահաւոր զաղոնի՛ք մը, ծրաբուած հին վրէ՛ժ մը,

Վարդան. — Այսնի՛, հեթի՛ք երկրպագեա արձանիզ, ա՛յս ի՞նչ ըսեմ Տիզրոնի արքունիքին որ քեզ վարժեցուց ատոր, կուռքերուն առջեւ ծունկի զալով զալով՝ հիմա ելեր արձաններուն առջեւ կը ծոխս,

Վասուկ. — Ես արձանին չե՛մ. արձանին տէ՛րը կը հարցափորձեմ, Մամիկոնեա՛ն զիտե՞ս, ո՞վ է տէրը:

Վարդան. — Խօսէ՛, մի՛ քաշուիր, ի՞նչ ըսել կ'ուզիս, բայց խօսէ՛, ի՞նչ կեցեր ես, թափէ՛թոյնդ,

Վասակ. — Այս, թո՛յն է թոյն որ ըզեզս կ'այրէ. ջիզերս, հողի՛ս կը զզետնէ. մո՛թ է աչքիս աշխարհը, քանի՛ յառեմ աչքերս այս վեհաշուք արձանին:

Վարդան. — Մի՛ պղծեր վեհաշուք ածականը, մենք, այս, կը ճանչնանք Աղուկը, հասարակ ոճրազուրծ մըն էր, ապստամը մը:

Վասակ. — Հերոսի մը յիշատա՛կը կ'անարգես, Մամիկոնեա՛ն, ան' Զինէն չեկա՛ւ, Այրաբատի առիշւն էր ան. եթէ Սղուկ աւազակ մըն էր, հաղոս ի՞նչ էր Մամդուն, չը խօսի՞ք:

Վարդան. — Նախահայրերը մէկղի՛. այդ էր ընելիք յայտնութիւնդ, Սիւնի՛, բայց ատիկա յայտնութիւն մը չէ՛, այլ հասարակ պատեռութիւն մը. զուն ջանա՛

Վասակ. — Ի՞նչ սեւ էջ պիտի բանամ ես, գործերա  
յայտնի են, մոլեկրօն ու կրքոտ կղերի մը, կոյր ու  
կատաղի զօրոկանի մը ձհոքը մատնուած ժողովուր-  
դը կ'ողբամ ես. ժողովուրդը, որ կը կորսուի.

Ղեւոնիդ. — Ժողովուրդը ի՞ր արիւնով նորէն պիտի  
գնէ իր ազատ կրօնքը, իր սուրբ հաւատ'քը...

Վասակ. — Ո՞ւր էր թէ շրլլար այդ Ս. հաւատ'քը:

Ղեւոնիդ. — Զունենայի՞նք Սիւնեաց նահանդ մը, ո՞չ  
ալ Վասակ մը Հայոց պատ նութեան մէջ:

Վարդան. — Ազգին կամքին դէմ թումբ մը, մեր բո-  
լոր ծրագիրները չու րը ձգելո՞ւ սահմանուած մի՛տք  
մը...

Վասակ. — Ո՞չ այս, ո՞չ այն, խեղճեր. խեղճե՞ր, կ'ար-  
դահատիմ ձեր վրայ, ձեր հետապնդած ցնորքներուն  
վրայ...

Ղեւոնիդ. — (զայրացկոս) Ա՛լ հերի՞ք է, ահա՛ վերջին  
խօսքս, Սիւնեա՛ց իշխան, դուն քանի որ ազգակոր-  
ծան քաղաքականութիւն մը բոներ կը քայես, չե՛ս  
կրնար այսուհետեւ միջամտել մեր գործերուն. դուն  
մէկղի քաշուէ՛ ուրեմն. եթէ օգտակար չես կըր-  
նար ըլլալ, գոնէ՛ վնասէդ աղատ մնանք: Մե՛ղք որ  
կղերին յարգը չե՛ս զիտեր, դեռ չե՛ս հասկըցեր թէ՛  
ժողովուրդ մը կառավարելու առաջին պայմանը՝ կը-  
դերը շահիլ է:

Վարդան. — Կղերազուրկ ժողովուրդ մը. կը նմանի  
գլխու մը՝ որ աչք չունի, երկրի մը՝ որ արեւ չունի,  
ձիու մը որ սանձ չունի...

Վասակ. — Աչք, արեւ, սանձ, ահա՛ կղերը, ա՛չքն է  
ժողովուրդին, արեւն է երկրին ու սանձը՝ ձիուն, այնա-

ողէն չէ։ բայց բեր ինծի այդ կղերը, որ աչք ըլլայ՝  
առաջնորդէ, արեւ ըլլայ՝ լուսաւորէ ու սանձ ըլլայ՝  
կառավարէ ժողովուրդը։

Վարդան. — Եա՛տ լու, ենթադրենք թէ չունինք այդ  
կղերը, ի՞նչ պէտք է ընենք ուրեմն։

Վասակ. — Ես ամէն բան յայտնի չե՞մ կրնար խօսիլ,  
չարամաօրէն պիտի մեկնուի։

Վեւոնդ. — Ե՞լ, ե՞լ, սպարապե՞տ, ետքի՞ թող պահէ  
յայտնելիքները։

Վասակ. — Գիտեմ, եթէ յայտնեմ, զիչապի պէս պիտի  
գալարուիս, առիւծի պէս պիտի մռնչես, բայց հող  
չէ, ահա՞ իմ կարծիքս, երէ՛ց, սպարապետ։ Մեր  
յոյսը խախուտ է, քանի որ այս ազգի՞ն վրայ դրած  
ենք, այս ազգը այնչափ վատ, ներքին վէճերու մէջ կը  
թաղլաւի, իրարու արիւն կը խմենք, պառակտուած  
ազգ մը, Կղերնե՞րը զրաւեր են մեր երկի՞րը. . . մատ-  
ղաշ մանուկներ, աղջիկներ, կիներ բոլո՞րն ալ ոաղ-  
մուերգուներ դարձան ո՞ւր է բնապաշտական գարե-  
րու անմեզ, անխառն երջանկութիւնը, ո՞ւր են, ո՞ւր  
Արմաւիրի սօսիները, միթէ մենք այ ատեն չունէի՞նք  
պաշտամունք։ Ա՛յս, պղծեցին մեր սրբութիւնները,  
ա՞յն օրէն որ Անակի տղան ոտքը դրաւ մեր հողին  
վլայ. Մեւ ու չա՛ր օր. անիծեա՞լ թուական, Եփրա-  
տի եղերքը համախմբուած Հայութիւնը մկրտե՛ց ու  
անոր պղտոր ալիքներուն մէջ յաւիտենապէս թա-  
զեց մեր քաղաքական անկախութի՞ւնը, ո՞ւր հեթա-  
նոս Տրդատը, ո՞ւր քրիստոնեայ Տրդա՞մը. այրե՛  
տուաւ մեր հին մատեանները բանաստեղծութեան  
մեռցուց հինին ու անցեալին սէ՛րը, Նոր Հայու.

թիւն մը ձուլեց, որ ահա՛ւասիկ։ Իեռ չենք զիտեր թէ որո՞նք են մեր արտաքին թշնամիները կամ բա՛ր բեկամները, ի՞նչ կը կարծէք, ո՞րի վրայ դրած էք յոյշ։ Բիւզանդիոնին, երբէ՛ք, մեղի համար ամէն յոյս կորսուած է։ Սակայն Պարսիկը կա՛յ ու կայ, միշտ հզօր, մի՛շտ ահաւոր, մի՛շտ պատկանէլ։ Հըսե՞ս երէց, որի՞ վրայ է ձեր յոյսը։

Աեւոնդ. — (բարկացած քափով մը) Մեր յոյսը՝ մեր Աստուա՛ծն է ա՛ն որ երկինքէն կ'իշխէ թագաւորներուն եւ Ան՛ որուն հրաշքները կ'ուրանաս, ո՞վ Սիւնեաց իշխան, Ան՛ պիտի պատժէ քե՛զ ալ, տոհմդ ալ, բաց աչքերով տեսնես բոլոր յոյսերուդ ցնդի՛լը, ուսւակնե՞րդ, աչքի՛դ առջեւ յօշյօշ պատու՞ն գաղանները, այրիդ՝ քարուքանդ պալատիդ վրայ բուի վա՛յը ձգէ նստի լա՛յ, որդերը վիտան պճալժան մարմնիդ մէջ. օձեր ու կարիճնե՞ր փաթթուին մսիդ, խոթէ՞ն թունաւորե՞ն քեզ, ամբողջ մարմինդ թարախոտի՛, շարուներու մէջ հոտի, հոդիդ, անա՛րդ հողիդ, դժոխքի դեւերաւն ճա՛նկը իյնայ, զեհենի լափիիղող կը-րակներուն մէ՛ջ թապլտկիս. սովալուկ զազաննե՞րը կրծեն ոսկորներդ, կրծե՞ն, կրծեն ու կրծեն.. Անիծեա՛լ, անիծեա՛լ ըլլաս յաւիտեան, անիծեա՛լ.. անաթէմա. . .

(Վասակ այս անեծին վրայ փոււ փոււ կ'ըլլայ կը ցնցուի)։

---

(ՎԱՐՍԳՈՅՐԸ ԿԻԶՆԷ)

ՎԵՐՋ Գ. ԱՐԱՐԻՆ

## ԱՐԱՐ Դ.

### ՏԵՍԱՐԱՆ Ա.

Յուշանիկ. Այնակ, ներարձակ ու լբուան, անկիւն մը նստծ, սզաւորի մը պէս — Ա՛ւ տարակոյս չ'այ, անսխուսափելի՞ է պատերազմը, հայրս՝ սպարապետ, վը-րոյրս՝ իր տոտչն թիկնագահը, խոկ ես հոս, անմխի-թար մօր մը քով, պիտի հեծել ու հեծեմ։ Այս, ի՞նչ զտոն է աղջիկ բլլու ու սպարապետի աղջիկ, պա-տերազմի տենչչն տանջուիլ, եւ աղջիկ է ըսելով՝ տաւնը փակուիլ, բանտարկուիլ. Աղատութեան ու Բանութեան կոիւն է որ անտարակոյս մեր յաղթա-նակով պիտի պատկռի չէ՝ որ սպարապետը հայրու է, ու իմ հոգիս, իմ կեանքիս կէսը՝ Վրոյրս է իր թիկ-նագահը։ Է՞ն ուշեմն, ես հայ աղջիկ մը, ինչո՞ւ չըլ-լամ գիւցադնունի մը, Այս', այս', կտրիճ մըն ալ ե'ս եմ, ե'ս (ինիզինիր ցոյց տալով) առիւծ է ործ առիւծը։ Ի՞նչ է մատակ առիւծը։ Այս', պիտի երթա՛մ, միա-նամ պիտի հայ քաջերուս։ Վրոյրի՞ս հետ, Վրոյրիս կուշզը պիտի կոռուիմ, գայրիեա՞ն մը պիտի չզատուիմ իրմէ, ներկայութեամբ պիտի ոգեւորե՛մ բանակը . . . (զայտուկ ներս կը սողոսկի Վրոյր)։

### ՏԵՍԱՐԱՆ Բ.

Յուշանիկ, Վրոյր

Վրոյր. (ևմիծալով մը) Պիտի ողեւորե՛ս բանակը, Յուշանիկ. (եսին կը նայի, Վրոյրը կը տեսնէ, կը վազէ, կը գրէկ) — Դա՞ն հո՞ս . . . (կը փարին իրարու, վայրկ-

Նան մը կը նեռանան իրաւմէ, երկու ժայլ տնդին, իրաւրու կը նային ապօած) :

Վրոյր .— Վերջապէ՞ս, դո՞ւն ալ, Շուշանի՛կ, դո՞ւն ալ պիտի պատերազմիս :

Շուշանիկ .— Ինչո՞ւ չէ. ես ի՞նչ եմ որ, ես ալ միթէ մարդ չե՞մ :

Վրոյր .— Բայց Սպարապետը պիտի արտօնէ՞ :

Շուշանիկ .— Հայրս չ'արտօնէ՞... ի՞նչ արդեւք կայ :

Վրոյր .— Մայրդ ի՞նչպէս պիտի թոյլ տայ :

Շուշանիկ .— Եթէ հայրս ալ չարտօնէ, եթէ մայրս արագիլէ, դարձեա'լ պիտի երթամ, պատերազմի՛մ պիտի : Վրոյր, մի՛ խոցոտեր սիրտս, թո՛ղ որ ծնողքս արգիլէ, բայց Հայրենի՞քս. պիտի կոռի՞մ, ու թերեւս ապրի՞...

Վրոյր .— Մի՛, լոէ՛, մենք պիտի յաղթենք :

Շուշանիկ . (Երազուն կոտրուած դեմքով) — Վրոյր, չե՞ս զարմանար եթէ քեզի ըսեմ թէ՛ սիրտս երբէ՛ք չի՛ տրոփիր, հիմա ուրիշ զգացումէ մը, տարբեր կիրքէ՛ մը կը տանջուիմ, կոռելու կիրքէ՛ն...

Վրոյր .— Իսկ մեր սէ՛րը :

Շուշանիկ .— Մեր սէ՛րը . պատերազմէ՛ն յետոյ :

Վրոյր .— Հապա վտանգնե՛րը, աքսո՞րը, անջատո՞ւմը... մահը բան մը չէ՛, բայց անջատո՞ւմը : ո՞հ, այն ատեն, եթէ դո՞ւն...

Շուշանիկ .— Ո՞հ, այն ատե՞ն, եթէ դուն... (յանկարծ) բայց ինչո՞ւ այս սեւ սեւ մտածումները...

Վրոյր .— Դուն ինձմէ հեռո՛ւ, ուրիշի՞ մը... իսկ ես աքսոր, կամ մեռած... կարելի՞ չէ, Շուշանի՛կ, անգո՞ւթէ ասիկա, անկարելի է՛, դէթ դո՞ւն ապրէ՛,

ու եթէ, ես ողջ վերադառնամ, քու ոէ՛րդ ըլլայ իմ  
պատկա... .

Ծուշանիկ. — Մեր պատ' կը, այս', բայց... ողատերո՞ղ  
մը՞տա՞խ, անդո՞ւթ ճակատագիր. Վրոյրի տեսքն դիւր-  
ուած, սիրահարական նով մը կ'ամցնի նակած, բաժան-  
ման ձանձումկն կը խռովի) Երկիրոք, կը տեսնեմ... .  
Վրոյր. — Մի՛ զողար, Ծուշանիկ, ես չե՛մ մեռնիր,  
Ծուշանիկ. — (սրբափած) Բայց ի՞նչ կ'ըսեմ, ի՞նչ, մի-  
թէ ինձի կը վայելէ՝ անձնատուր Ըլլալ սիրո՞յ, եր-  
րէ՛ք, պատերա՞զմը... .

Վրոյր. — Իսկ եթէ... .


Ծուշանիկ. — Մեռնինք, մեր ոէրը հետերնիս երկիրնիք  
կը տանինք, Վրո՞յր, Վրո՞յր, հուտաք չունի՞ո ահ-  
ման և թեան վրայ:

Վրոյր. — Ծուշանիկ, Ծուշանիկ, զուն մի՛ զար, մի՛  
զար, քեզի՛ համար կը կռուին վաթսունը վե՛ց հաղա՞ր  
քաջեր, զուն հոս, երջանիկ խազազ ապրէ՛, մա՞յրդ  
մխիթարէ՛, քեզի պէ՛տք ունի Հայաստան. զուն ա-  
պազայ թագուհի՞ն ես... .

Ծուշանիկ. — Թագուհի՛, խոտելի՛, ատելի՛ տիտղոս,  
ես կը նախընտրեմ ըլլալ հերոսուհի, քան թէ կոչուիլ  
թագուհիւ ետեւէ՛դ պիտի գամ. ետեւէ՛դ (կը մօսենալ  
կը նամբուրուին, յետոյ աշխերը կը սրվի) Հո՞ն, Տզմու-  
տի եղե՛րքը, ասզին՝ Հա՛յը, անդին Պարսիկը: Պա-  
տերազմին բա՞զգը գիտէ՛ ո՞ւր որ աւելի կատղած  
զանեմ թշնամին հո՞ն պիտի նետուիմ, հո՞ն, իմ ճանձ-  
էն ճերմակ ձիովս, ես ու ձիս, միտափին պիտի խո-  
յանանք արիւնի գա՛շտը... Աւարմ՞յր, Աւարա՞յր...  
Վրոյր. — Ե՞ն, միա՞ս բարով ուրեմն, ո՞վ իմ հոգւոյս

հատորիկ. ահա՛, ահա՛, կերթամ. կը մօտենայ յուզում-նալից. կը փարի Ծաւանիկին) թերեւս վերջին ան-դա՞մն է. ով գիտէ, պատերազմին գալարափողը մօ՛տ է զռուալու, ահա կ'երթամ, մնաս բարով... (կը մեկնի) Նուշանիկ. — (աշխերը սրբելով) Գնա՛ց... ա՛խ, երա-զել կ'ուղեմ, ինքինքս մոռնալ, անէանա՛լ բոցա-նա՛լ... Սակայն, աւա՛զ, դուն, ի՞մ սիրական, ահա՛ կ'երթաս մահուան դա՞շոը: (կը նստի, կը սկսի լալ ուռ մօւռ զլուխը ձեռներուն մեջ, նոյն միջոցին Ղե-ւնդ երեց ներս կը մտնէ)

### ՏԵՍԱՐԱՆ Ա.



Նուշանիկ. — Գնա՛ց, գնա՛ց, ա՛լ չպիտի դառնայ, (Ես-րեսները կը ծածկէ ձեռներովիր):

Ղեւնդ. — (մօտենալով Նուշանիկին ի՞նչ կայ դարձեալ, աղջի՛կս, ինչո՞ւ այդպէս մտածկոտ կ'երեւաս:

Նուշանիկ. — Ի՞նչպէս չի մտածեմ, Տէ՛ր հայր, քանի՛ որ ժամը մօտեցաւ, ահա՛ զունդ զունդ, կը դիմեն Շաւարշան, ես հոս ի՞նչպէս չը մտածեմ...

Ղեւնդ. — Դո՞ւն ալ պիտի գաս, աղջի՛կս, քեզ ալ պիտի տանինք:

Նուշանիկ. — (խնդալով) Կ'աղաչեմ, Տէ՛ր հայր, նոր րա՞ն մը կայ, խօսեցաք հօրս, զիս հետը պիտի տա-նի՛. (զլուխը երեցնելով, դժգոհ) ո՛չ, ո՛չ, ես հոս չե՛մ կհնար...

Ղեւնդ. — Կյոսե՛ր եմ, աղջի՛կս, անհո՛զ եղիր, դուն հանդիստ եղիր, բանակին հե՛տ կը տանինք քեզ:

Նուշանիկ. — Արդեօ՞ք, Տէ՛ր հայր, իբա՞ւ է, զիտի

առնի՞ք զի՞ս ալ, պիտի տեսնէք թէ ո՞րքան արժա-  
նի եմ եղեր ձեր վատահութեան :

ԱԵԼՈՆԴ. — Սպարտակետին աղջիկը՝ Հայոց զօրքերուն  
Աամիլլա՛ն պիտի ըլլայ ու զանոնք պիտի մզէ զէպի  
կորիւ, քանի՛ տեսնեն քեզ իրենց մէջ, ա՞յնքան պի-  
տի արխանան :

ԾՈՒՅԱՆԻԿ. — Երթա՞մ ու ընմի, Տէ՛ր հայր, վատահ բլ-  
յա՞մ, ձեր խոստումը՝ խոստում է՝ գիտեմ :

ԱԵԼՈՆԴ. Անշո՞ւշտ, անշո՞ւշտ, ա՞ղջիկս, դան հիմա  
զնա՛, անհո՞ղ եղի՞ք, զի՞ս մինտէ ձզէ՛ քէջ մը : (ԾՈՒ-  
ՅԱՆԻԿ կը մեկնի),

ԱԵԼՈՆԴ. (աղօրքի կեցած) — Տէ՛ր իմ Փրկիչ և բարե-  
րար, մօտեցաւ ահա՛ վճռական օրը. դուն գիտե՞ս,  
վերէն նայէ՛... Գթա՞ երկրագրուներուդ. տիրելու-  
տենչանքէն չն'նք թէլազրուած մենքու այլ քու սէ՛րդ,  
ո՞վ Փրկիչ աշխարհի. քու սէ՛րդ միայն կը մզէ մեզ  
կոռւելու մաղղէութեան զէմ. դուն գիտե՞ս, նայէ՛ ու-  
տես... Մի՛ թողուր որ Յազկերտ զործազրէ իր չար  
գիտումները մի՛ թողուր որ ուրացող Վասակ յաջողք  
իր գաւերուն մէջ... (ծնրադիր ու գետնամած) Քեզի  
միայն քեզի՛ կը բանոմ սիրու. ո՞վ իմ Յիսուս, այս  
անզա՞մ ալ ազատէ Հայաստանը բռնութեան ժանիւ-  
քէն. վերագարձո՞ւր կորառուած խազազութիւնը, այն  
առեն սիրախօֆար կը փակեն աշքերս ու կ'աւանդեմ  
հոգիս, մրմիջեւով (նոյն պահուն ներս կը մտնէ ներք.  
պուն, նումարուելով ԱԵԼՈՆԴ երկցեն). Արդ արձակեա՞-  
զծառայս քո... :

### ՏԵՍԱՐԱՆ Դ.

Դեւոնի երեց, Ներշապուհ

Ներշապուհ. — Կ'աղօթե՞ս դեռ. Տէ՛ր հայր + կա՛րձ է ժամանակը. Մըրք գոն Հայրապետը ո՞ւր է. Մպարապետը դեռ չեկա՞:

Դեւոնի. — Ե՞ս ալ կըսպասեմ, այսօր կանուխ ելեր է ապարանքէն:

Ներշապուհ. — Գիտեմ, Հայրապետին հետ էր, պիտի դային մինչեւ հիմա:

Դեւոնի. — Աւրեմն սպասենք:

Ներշապուհ. — Խմացա՞ր լիրբին ըրածնեզը, անամօթը...

Ներշապուհ. — Վասա՞կը, արդէն ի՞նչ կը յուսաս այդ անապատուածէն:

Ներշապուհ. — Ծա՛տ բաներ կը յուսայի, բայց հիմա...

Դեւոնի. — Զգուշանա՞լ պէ՛տք է, Արծրունի՛:

Ներշապուհ. — Հապա քովի Զանգա՞կը, քահանաներուն արա՛տը, հայրենիքին դաւաճա՞նը:

Դեւոնի. — Առաջ անո՛ր պատիժը պէ՛տք է տալ. առդարշելին չա՛տ մտքեր պղտորած է:

Ներշապուհ. — Կրնամ ըսել թէ՛ Վասակի՞ն ալ թունատուն ի՞նք է եղեր:

Դ. Եւոնի. — Կը սխալիս Արծրունի՛, Վասակ թունատուլի կարօտ չէ՛. ինք արդէն թունաւոր օ՛ձ մըն է...

Ներշապուհ. — Բայց Զանգա՞կը, այն անարժա՞ել օ՛խ, ի՞նչպէս փոեցի դետինը...

Դ. Եւոնի. (այլայլած) — Ի՞նչ կ'ըսես, Արծրունի՛, ի՞նչ...

աղջ, իրա՞ւ վերջոցուցիր :

Ներս սպան. (զննունակ — Վայրիկենապէս, ոճրազուրծը, Ապսրապետին արիւնատ պիտի մտնէր . . .

Դեւնդ. — Կեցցե՞ս Արձրունիւ : Փա՞ռք քեզ ամենակա՛լ Տէ՛ր, Փա՞ռք քեզ, (բազդատարած) . . . Բայց ինչո՞ւ կ'ուշանան տանիք, արգեօք ի՞նչ պատահեցու, (Քիչ մը կասկածու :

Ներսապոն. — Եթէ դեռ ուշան ան, ի՞նչ պիտի ընենք հաս :

Դեւնդ. — Քի՞չ մըն այ կրող սանիք, ողէ՛տք է գան, (դրսեն աղմուկներ, ոսքի ձ սիներ, կարգով ներս կը մըսնեն նովսկի կարողիքոս, Սահակ եալխսկոպոս, նախաւարներ, Վարդան :

### ՏԵՍԱԲԱՆ Ե.

Խախորդներ, Յովսկի կարողիկոս, Սահակ եալխսկոպոս, Վարդան

Յովսկի կար. — Աղջո՞յն ձեզ, ո՞վ սիրելիք :

Դեւնդ. (Ներսապոնին) Ահա՛ եկան, (կարողիկոսին Աստուած օգնական, Ա. Հայրապետ) : (Ամենիը կը բոլոր ոին նայրապետն ուրց)

Յովսկի կար. — Օ՞ն, արի՛, Սպարապետ, Մաժիկոն.

Կան, կամօքն Աստուծոյ ամենատկալին և զօրութեամբն Յիսուսի Քրիստոսի, կարգեցինք զքեզ բանակին զօրավոր (դառնալով նախարարներուն) Օ՞ն ուրեմն ո՞վ իշխանք և նախարարք. ողջունեցէ՛ք Հայոց մեծ ըստ պարապետք :

Ամենիը. (բարձրաձայն) — Կեցցէ՛ մեծ Սպարապետը . . .

Դեւնիդ. (յուզուած կը զոչի) — Կերցէ՛ Աւ արայրի Ար-  
ծի՛ ը (այս միջոցին մանուկն Վահան, բարձ մը քեւե-  
րուն վրայ առած, բարձին վրայ սուր մը դրուած, կու-  
գայ կը կայնի Դեւնիդի քով, սա սուրը կ'առնե կուտայ  
Վարդանին, ըսելով), Այս սուրը քեզի՛ կը յանձնէ Հայ-  
րենի՛ քը յաղթական վերադարձի՛ր, Հայոց մեծ Սպա-  
րապե՛տ :

Վարդան. (սուրը բարձրացուցած) — Կ'երթնում այս  
սուրը թուրիս վրայ, կ'ուխտե՛մ արիւնիս մինչեւ վեր-  
ջին կաթիլը թափել Ս. Եկեղեցիին, Ս. Աղատութեան,  
ու Հայրենիքի՛ս համար :

Ներեապուն. — Ապրէ՛, Մամիկոնեա՛ն, ապրէ՛ Հայաս-  
տանին համար :

Յովոնի կար. — Եկեղեցին ու հայրենիքը քեզի՛ կը  
նային, Աղատութեան Զինոր. օրհնեա՛լ ըլլաս դուն:  
Զօրութեանց Տէրը պիտի պահպանէ Հայոց Բանա՛կը :  
Ամենքը. — Ապրի՛ Վարդան Մամիկոնեան, ապրի՛ Աղատ  
Հայաստան :

Դեւնիդ. — Թո՛ղ սատկի՛ն մատնիչները . . .

(Ամենքը միասին դուրս կ'ելլեն հետեւեալ խյլերգով)

Օ՛ն, յԱւարա՛յր, օ՛ն յԱւարա՛յր  
իր զէնք առնէ թո՛ղ մէն մի այր.  
Հո՛ն, հո՛ն. Ծղմուտ զետի եղերք  
Մե՛զ կ'սպասեն ծերք ու տղերք  
Վրէ՛ժ կը կանչեն, վրէ՛ժ կը մոնչեն | կրկնել  
Հայ առիւծներ որ կը ննջեն  
Բանակ մ'ունին վաթսուն հազար.  
Ապրի՛ Վարդան մեր զօրավար :

(ՎԱՐԱԳՈՅՐԸ ԿԻԶՆԵ)

## ԱՐԱՐ Ե.

Տղմուսի եզերը . Աւարայրի Դաօքը  
ՖԵՍԱՐԱՆ Ա,

Վարդան. (մինակ, կանուխ արբացած, առալոյս և, բա-  
նովը դաօտին մէջ կը պառկի դեռ) — Ի՞նչ քաղցր է  
Շաւարշանի զիշե՞րը, աչքիս առջեւ կը տարածուի  
զաշտր, ուր կը ննջէ Հայաստանի Բա՞ղզը... Տղմուտը՝  
պղտոր ալիքներով՝ աչքիս տակ, անդին՝ սեւ բանա-  
կը, թշնամի պարսիկին գաղաննե՞րը, մերինին եռա-  
պատի՞կը... Այս, որչա՞փ տշացաւ Առաւօտը, ե՛լ, ե՛լ  
ծաղէ՛ շուտով, ու բե՛ր մեզի ցանկալի՞ օրը, (երկինք  
կը նայի) Ա՞վ սրտերուն գաղտնագէտը, ամենատե՛ս  
Աչք, զուն զիտես որ Պարսիկը չա՛ր է անիրա՞ւ է,  
պէ՛տք է զրէ՛ժ լուծել, զրէ՛ժ այն զաղանէն, որ մոլե-  
րեցո՞ց մեր խիղճը... արդեօք պիտի մեռնի՞մ առանց  
զրէժս առնելու, հեկղեցի՞իս զրէժը : Այսօք, այսօ՛ր,  
մինչեւ իրիկո՞ւն պիտի քաւեմ այդ մե՞զքը, (կանգ  
կառնէկ, աւելի լուրջ, աւելի խորհրդաւոր) պիտի մաք-  
րե՞մ իմ կարմիր արիւնո՞վս... (բազմութիւնը կը մօտե-  
նայ նետենեսէ, բանակը կ'արբնկալ, խթսումը կը սկսի.)

## ՖԵՍԱՐԱՆ Բ

Վարդան, Յովսէփի Կարողիկոս, Ղետնադ երեց, Ներա-  
պուհ, Նախարարներ, զօրքեր

Յովսէփի կար. — Ողջո՞յն քեզ քա՞նդ Մամիկոնեան :  
Ղետնադ. — Ողջո՞յն քեզ Կարմի՞ր Վարդան :  
Նախարարներ. — Ողջո՞յն քեզ արի՞ սպարապետ :

Վարդան. — Դիմացի շաբառութեր կը դիտէք, միտք չի մէջ առարկաներ կը խլրտին, կը խոչորնոն, ահա կ'առաջանան դէպի Տղմուռ. (ցոյց տալով նեռուն),  
Ներքապուն. (դեպի նեռուն նայելով) — Այս', այս', Մատենի՛կն է, Մատենիկ գունդը:

Դեւոնդ. (զօրբերուն) — Որդեականե՛րու ահա՛ եկաւ վերսին ժամը ամէնքդ ալ հաղորդեցի, զիտէք. կամաւոր պատարա՞գ պիտի բլլոք Հայրենիքի Ա. Ահղանին վրայ. դո՛ւք Հայաստանին ընտիր բնտիւ ծաղի՛նե՛րը, պիտի բարէք յաւիտեան: Զեր էկանք, սուդ, չո՛տ սուդ ծախեցէք: խաչը ձեռքը կ'օրնի բանակը)

Յովսեփի կաք. Մակաբոյեցիներուն յաղթանակինե՛րը կը մաղթեմ ձեզի, քաջարի՛ներս...

Վարդան. — Ա. Հայրապե՛տ, Ա. Հայրեր, Եշխաննե՛ր, նախարարնե՛ր, իմ անձնուէր զորականներ, պատերազմներ շատ մզեցի, ձեզի՛ հետ ու ձե՛ր օգնութեամբ մի՛շտ յաղթող եղայ, բայց այսօրուա՞նը չի նմանիր հասարակ պատերազմներուն, այսօրուանը՝ Լոյսին սլատերազմն է Խաւարին դէմ. Պարսիկը ջնջել կ'ու դէ Հայ անունը: Հայկազանց ու Արշակունեաց թաղուած հարստութիւննե՛րը դողացին, սարսեցտն, ասոնց բոլոր թագակիր գլուխները՝ զերեղմաններուն ծոցէն գուրս ցցուած՝ մեղի՛ կը նային. քաջե՛ր... Դարերը դողալով պիտի դիտեն այսօրուան ճակատամարտը. անցեալը՝ իր փառքերով ու տպադան՝ իր պատմութեամբ: Եթէ յաղթենք, կը վերականդնե՛նք Հայրենիքը, իսկ եթէ մեռնինք՝ անմահ անուն մը կը թողունք ժառանգութիւն ապագայ աերունդին ու թանառամ լրւսապսակ մը՝ Քրիստոսի արքայութեան մէջ:

Ամենիր. — Կեցցէ՛ Հայոց քա՛ջ Սպարապետը, կեցցէ՛  
Մամիկոնեանց Առիւծը, (ծափեր)

Ներշապուհ. — Թշնամին շարժեց ս՛ւ կը մօտենա՛յ (աղ-  
մուկներ, պատերազմի ազդարար ձայներ, զօրական մը  
վագելով ներս կուգայ)

### ՏԵՍԱԲՈՒՆ Դ.

Նախորդներ, Առանձար Ամառաւնի,

Առանձար. — Սպարապե՛տ քաջ, իմ երիու հսղարով  
յարձակեցայ թշնամիին վրայ, մեծ մասը ջարդեցինք,  
մնացածը՝ փախաւ :

Վարդան. — Յետո՞յ :

Առանձար. — Օգնական զօրագունդեր հառան մեզի դէմ,  
և ես հաղիւ հո՛ս նետեցի ինքզինքա :

Վարդան. — Գունդե՞րդ զո՞ւն մինա՞յ. հո՛ս :

Առանձար. — Մինակ չե՞ն, կը կռուին, դէպի հո՛ս կ'ա-  
ռաջանան :

Ամենիր. — Զէնքի՛, զէնքի՛...

Վարդան. — Ա՛յ քաջերո, կազմ ու պատրա՞ստ, քեզի՝  
Արծրունեա՛ց իշխան, կը յանձնեմ տռաջին գունդը և  
զինակից՝ Մոկաց իշխո նը. միւս նախարարներուն  
հետ, երկրորդ զունդը՝ քեզի՛ կռւտ սմ, ո՛վ իմ կորո-  
վի Խորէն Խորխոսունի, քեզ զինակակիցներ՝ Ար-  
սէն Ընծայեցին ու Ներսեն Քաջբերունին : Գո՞ւն Թա-  
թո՞ւլ, Վանանդի առիւծ, ա՛ս երրորդ զունդը եւ  
քեզի նիզակակից՝ Տաճատ Գնդունին : Եկո՞ւր նայիմ,  
եկո՞ւր ո՞վ իմ սիրական չորրորդ զունդ, եկո՞ւր եւ  
զուն՝ անվա՛խ նիզակակիցս Արշաւի՛ր, և զո՞ւն հա-  
րազատ եղբա՛յրս՝ Համազա՛ռպ (կը համբուրուին), Օ՛հ  
արի՛ք, ընկերնե՛ր, առա՛ջ, առա՛ջ, առա՛ջ :

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

Նախորդներ, Շուշանիկ

Շուշանիկ. — (Յանկար կը մտե. սպառագեն, զլուխը սաղաւարդ) Հապա զիս մոռցա՞ր, հա՛յր իմ սպարա պետ:

Վարդան. — Դո՞ւն... (Խոռված ձեռքը նակտին) Շուշանիկ' (դարձեալ կը խորասուզուի. յետոյ կը գոչէ) Երեկի՞նք, ա՛ռ, քեզի' կր նուիրեմ աղջիկո. իմ կեանքու Վրոյ. — (Ոյս միջոցին ապօած, լեզուն բռնուած, կը նայի ինքնիրեն) Ան՝ հո՞ս...

Գեւոնդ. — (Դողդոջ ձայնով) Ապրի՛ս, Վարդանի վարդը շուշա՞նը Շաւարշանի:

Վարդան. — Զօրականնե՞ր, առէ՛ք ձեզի նոր նիզակակից մը, և դո՞ւն Շուշանիկ' նախայացձակ հերոսունի, սարսափեցո՞ւր թշնամին, թո՛ղ Տղմուտի ալիքները զողան քու խաղացքէդ...

(կը դառնայ Վրոյին) իսկ դո՞ւն Վրո՛յր, թո՛ղ զիս և հետեւէ՛ (ցոյց տալով Շուշանիկը) անո՞ր, սորվէ՛ զոհել կեանքդ հայրենիքի ազատութեան համար:

Ամենքը. — Կեցցէ՛ Շուշանիկ:

Վարդան. — Շարժեցէ՛ք, օ՛ն յառա՞ջ, յարձակինք. (հեռուեն կը տեսնուին գունդեր):

Ներեապուն. — Մուշկան Նիւսալաւ որտի՛ նովրայ:

Գեւոնդ. — (խաչը ձեռքը) Քուրմերո՞ւն վրայ, փիղերո՞ւն վրայ:

Ամենքը. — Յաղթութիւն, յաղթութիւն...

Ներապուհ. — Պա՛տը, վա՛տը, թշնամիին կողմը ան-  
վարդան. — Հայրենիքը, վրէ՛ժս. (կիյնալ)

## (ՎԱՐՍԳՈՅՐԸ ԿԻԶՆԵ)

### ՊԱՏԿԵՐ Դ.




Աւագայրի դաւը, զիւեր, լուսնիկալ. Տղմուտը ներկ-  
ուած արխինով. նակատամարտին դաւը ծածկուած դի-  
ակներով ու կիսամեռ. վիրաւուներով. Նեսնի երեց,  
մինակ, մը բափառի Վարդա՞ն, Վարդա՞ն կանչելով):  
Պետնդ — Գիշե՞ր է զիշե՞ր, ու ես կը թափառիմ ա-  
հա՛ ժամերէ իզեր, զո՞ւր կը փնտոեմ սիրելիներուս  
հետքե՞րը, ո՞ւր մնացին արդե՞ք մէկը չը դարձաւ,  
ըսէ՞ք, ըսէ՞ք, ինչո՞ւ լուռ կը մնաք, ո՞ւր էք, ո՞ւր  
մնացիք Հայաստանիս պահապա՞ն հրեշտակներ. . . ո՞ւր  
զացիք, ա՞խ, յաւիտեա՞ն չը տեսնէին, տէքերս չը տես  
նէի՞ն այս պատկերը. ծունկերս կթուած, ոտքերս  
ա՛լ չեն կրնար շարժիլ, (յանկարծ գիտին ծռելով դիակ  
մը կը զրկէ) ա՞հ զո՞ւն ես Խորխոռունեաց տոհմին ա՛ստ-  
զը, կորովի՞ղ Խորէն, ու զո՞ւն Արտա՛կ. . . (կը փոր-  
ձէ քալիլ, կիյնալ) Առտուա՞ծ իմ, բ՞նչ կը տեսնեմ,  
գնունի՞ս, Վահան Գնունիս ու քովը, ճի՛շդ քովիկը,  
վրո՞յրս, Շուշանիկին ապադա՞ն, Մամիկոնեան սպա-  
րագետին թիկնապա՞նը. . . աւա՛զ վարդագոյն արիւնը  
սառե՞ր է ճակատը. . . (կը սողալ հառաջնիներով) Ար-  
շա ի՞ր Վարդանիս ա՞չ բազուկը, զո՞ւն ալ ինկար (կը  
լուի, առաջ առաջ սողալով) Դո՞ւն ես, Համազա՞սպ,  
ո՞հ, արիւնի Ճողին մէ՞ջ կը լողամ. . . Զէ՛, չէ՛, այս

թափուած արիւնը պիտի խօսի՛ երկինքը, պիտի լուծէ՛ վրէժը... (զլուխը վեր կ'առնէ ականջ դնելու սրցում երգ մը որ Ֆղմուտի պղտոր ալիբներուն խառնուած կը հասնի Ղեւոնդ երեցի ականջին, դեմքը կը տեսնուի արցունիներու մէջ, երգին վերջին վունկերը կը լսուին որոշակի) «Մեռա՛ւ Վարդա՛ն, լա՛ց Հայաստան» (Ղեւոնդ կը ցնցուի. երկու բազուկները տարածած զիւերուան խաղաղ հավին դեմ, կը կանգնի, կոյրի մը պէս կը խարխափէ, նորին կը նստի, կը պոռքեալ) Հէ՛... մեռա՛ւ Վարդան, (ու կ'իյնայ դիակի վրայ. կը գրկէ Վարդանին անտունչ դիակն է, զլուխը Ղեւոնդ երեցի ձախս ուսին վրայ) Դո՛ւն դո՛ւն ալ ո՛վ Տարոնի առիւծ, Աւարայրի Արծի՛ւծը, ինկա՛ր ուրեմն ո՛րբ մնաց Հայրե՛նիքը, ո՛րբ տարաբա՛զո Շուշանիկը. .

Նոււսնիկ,— (Յանկարծ, դիցունիի մը պէս նետուելով դեպի Ղեւոնդ երեցը) Ինչո՞ւ որբ, պիտի ապրի՛ հայրենիքը, անմահացա՛ն Վարդանանք :

### (ՎԱՐԱԳՈՅՐԸ ԿԻԶՆԵ)

—ՎԵՐՋ—





$\alpha = 15^{\circ} \text{ n}^{\perp}$


891.99

F-75

ԳՐԱԴԱՐԱՆԸ

ԱՇՏՎԻԿԱ 25 ՍԵՎԵՐ

ՎԳԴ ԽՄ 8.6.7.



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0041295

1  
A 5248